

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ կողմից խոշտանգումների կանխարգելման
Եվրոպական կոմիտեի առաջարկությունների
իրականացման մոնիթորինգի
արդյունքների հաշվետվություն**

Վանաձոր
Մարտ 2012



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



COUNTERPART
INTERNATIONAL



Հեղինակային խումբ՝

Էդմոն Մարուքյան

Անի Դերձյան

փաստաբան, փորձագետ

ծրագրի օգնական

Սույն հրապարակումը, հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության No AID-111-LA-10-00001 համագործակցության պայմանագրի DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում «Ռազմավարական դատավարությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Ռազմավարական դատավարությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:

Հաշվետվությունը կարող է օգտակար լինել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին, ՀՀ փակ և կիսափակ հաստատություններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խմբերի, փակ և կիսափակ հաստատությունների աշխատողների, փաստաբանների, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և անձանց, ինչպես նաև միջազգային կառույցների համար:

ISBN:

©Հեղինակային խումբ, 2012թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	5
2. ՆԱԽԱԲԱՆ.....	6
3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	7
4. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ ԽԿԿ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	8
4.1. ԽԿԿ 2002 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց.....	10
4.2. ԽԿԿ 2004 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց.....	11
4.3. ԽԿԿ 2006 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց.....	12
4.4. ԽԿԿ 2008 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց.....	13
4.5. ԽԿԿ 2010 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց.....	14
5. ԽԿԿ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿՐԿՆԱԿԻ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ.....	15
5.1. ԽԿԿ 2004 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց.....	15
5.1.1. Դատարանների առնչությամբ.....	15
5.1.2. Քրեակատարողական հիմնարկների առնչությամբ.....	16
5.1.3. Ոստիկանության առնչությամբ.....	17
5.1.4. Ձերբակալված անձանց պահելու վայրերի առնչությամբ.....	17
5.2. ԽԿԿ 2006 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց.....	18
5.2.1. Դատարանների առնչությամբ.....	18
5.2.2. Քրեակատարողական հիմնարկների առնչությամբ.....	19
5.2.3. Ձերբակալված անձանց պահելու վայրերի առնչությամբ.....	20
5.3. ԽԿԿ 2008 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց.....	21
5.3.1. Ոստիկանության առնչությամբ.....	21
5.4. ԽԿԿ 2010 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց.....	25
5.4.1. Ոստիկանության առնչությամբ.....	25
5.4.2. Քրեակատարողական հիմնարկների առնչությամբ.....	27
5.4.3. Հոգեբուժական հիմնարկների առնչությամբ.....	28

6. ԽԿԿ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	30
6.1. ՀՀ Ոստիկանության վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.	30
6.2. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.	41
6.3. ՀՀ Ազգային անվտանգության ծառայության վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.	44
6.4. ՀՀ առողջապահության նախարարության վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.	45
6.5. ՀՀ պաշտպանության նախարարության վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.	53
6.6. ՀՀ արդարադատության նախարարության վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.	55
7. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ.....	79
8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	80

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԽԿԿ կամ	Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը
CPT	նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտե
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՔԴՕ	Քրեական դատավարության օրենսգիրք
ԶԱՊՎ	Զերբակալված անձանց պահելու վայր
ՌԴԿ	Ռազմավարական դատավարությունների կենտրոն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կուսակցություն
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԶՈՒ	Զինված ուժեր
ՌՌ	Ռազմական ոստիկանություն
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ

2. ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունը 2002 թվականի հունիսի 18-ին վավերացրել է «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան», որի արդյունքում Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման Եվրոպական կոմիտեն (այսուհետ CPT կամ ԽԿԿ) հնարավորություն ստացավ այցելել Հայաստանի Հանրապետություն՝ նպատակ ունենալով դիտարկել ազատազրկման վայրերը՝ գնահատելու համար ազատազրկված անձանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը: Այդ վայրերը ներառում են բանտերը, անչափահասների կալանքի կենտրոնները, ոստիկանական տեղամասերը, օտարերկրացիներին պահելու կենտրոնները, հոգեբուժարանները, սոցիալական խնամք տրամադրող հաստատությունները և այլն:

ԽԿԿ պատվիրակություններն օգտվում են ազատազրկման վայրեր անսահմանափակ այցելության և նման վայրերում անարգել տեղաշարժվելու իրավունքից: Նրանք կարող են առանց վկաների զրուցել ազատազրկված անձանց հետ և ազատորեն շփվել ցանկացած անձի հետ, ով կարող է տեղեկատվություն տրամադրել:

Յուրաքանչյուր այցելությունից հետո ԽԿԿ մանրամասն զեկույց է ներկայացնում տվյալ պետությանը: Այս զեկույցը ներառում է ԽԿԿ եզրակացությունները և նրա հանձնարարականները, մեկնաբանություններն ու տեղեկատվություն ստանալու խնդրանքները: ԽԿԿ-ն խնդրում է նաև հանգամանալից պատասխան տալ իր զեկույցում բարձրացված հարցերին: Այս զեկույցներն ու պատասխանները շահագրգիռ պետությունների հետ ընթացող երկխոսության մասն են կազմում:

ԽԿԿ պատվիրակությունը այցելություններ է կատարել Հայաստան 2002, 2004, 2006, 2008 և 2010 թվականների ընթացքում, որոնցից յուրաքանչյուրի արդյունքում պատրաստվել է մանրամասն զեկույց: Միննույն ժամանակ, իրավիճակի նկարագրմանը զուգահեռ, զեկույցներում արձանագրված խախտումների շտկման ուղղությամբ Հայաստանի Հանրապետությանն արվում են մի շարք առաջարկություններ:

Համաձայն «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայով» ամրագրված ընթացակարգի, Կառավարությունները պարտավորություն են կրում ԽԿԿ կողմից կազմված հաշվետվության վերաբերյալ կազմել պատասխաններ, որոնք պարունակում են Կառավարության դիտարկումները՝ պատասխանելով ԽԿԿ պատվիրակության առաջարկներին: Այդ պատասխաններն իրենց մեջ ներառում են ինչպես այն աշխատանքները, որոնք Կառավարությունը մինչ այդ իրականացրել է տվյալ ուղղությամբ, այնպես էլ այն անելիքները, որոնք նախատեսվում են իրականացնել ապագայում:

3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի շրջանակներում մանրամասն ուսումնասիրվել են ԽԿԿ պատվիրակության 06/10/2002թ. - 17/10/2002թ., 20/04/2004թ. - 22/04/2004թ., 02/04/2006թ. - 12/04/2006թ., 15/03/2008թ. - 17/03/2008թ. և 10/05/2010թ. - 21/05/2010թ. այցելությունների արդյունքում կազմված զեկույցներն ու առանձնացվել են նրանցում տեղ գտած առաջարկությունները: Այնուհետև դիտարկվել են ՀՀ Կառավարության կողմից ներկայացված պատասխանները, մասնավորապես վեր են լուծվել Կառավարության այն գործողությունների նկարագրությունները, որոնք արդեն իրականացվել կամ պլանավորվում են իրականացվել՝ զեկույցներում մատնանշված խնդիրների բարելավմանը միտված առաջարկությունների կապակցությամբ:

Ավելին, հարցումներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն և ՀՀ ոստիկանություն՝ այս գերատեսչություններում իրականացված և ընթացիկ բարեփոխումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակով: Հավաքագրված տվյալները համադրվել են ԽԿԿ պատվիրակության առաջարկությունների և ՀՀ Կառավարության կողմից ներկայացված պատասխանների հետ՝ նպատակ ունենալով պատկերել Հայաստանի կողմից ստանձնված պարտավորությունների կատարման ընթացքի իրական վիճակը:

Ուսումնասիրության արդյունքում կազմվել է ՀՀ կողմից ԽԿԿ պատվիրակության զեկույցներում բարձրացված հիմնախնդիրների լուծման վիճակի մասին հաշվետվություն, որն ուղարկվելու է ՀՀ Կառավարությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը, ՀՀ առողջապահության նախարարությանը, ՀՀ պաշտպանության նախարարությանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ՀՀ ոստիկանությանը, ՀՀ դատախազությանը, ՀՀ քրեակատարողական վարչությանը, ՀՀ զինված ուժերին, ՀՀ Ազգային անվտանգության ծառայությանը, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների խմբին, ՀՀ ոստիկանության ձեռքակալված անձանց պահելու վայրերում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խմբին, ՀՀ կրթության և գիտության նախարարության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդական խմբին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առնթեր խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհրդին, ՀՀ ՊՆ առնթեր հասարակական խորհրդին, միջազգային կազմակերպություններին և տեղական շահագրգիռ կազմակերպություններին՝ վերջիններիս տեղեկացնելով տվյալ բնագավառում առկա խնդիրների մասին, միևնույն ժամանակ հասարակության ուշադրությունը գրավելով պետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների կատարման ընթացքին:

4. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ ԽԿԿ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն Հայաստան կատարած 5 այցելությունների արդյունքում կազմված հաշվետվություններում ամրագրել է ընդհանուր թվով 592 դիտողություն, այդ թվում՝ առաջարկություններ, պահանջներ, տեղեկատվություն ստանալու խնդրանքներ և մեկնաբանություններ:

ՀՀ Կառավարությանն արված տարբեր իրավիճակների շտկմանը/բարելավմանն ուղղված առաջարկությունների թիվը կազմել է 172-ը, որոնցից 23-ը կրկնվել են տարբեր թվականներին կազմված զեկույցներում: Ի դեպ, 4 առաջարկություն կրկնվում են 3 անգամ, իսկ 19-ը՝ 2 անգամ:

Վերոհիշյալ 172 առաջարկություններից 12-ի դեպքում ՀՀ Կառավարությունը որևէ պատասխան չի տվել, իսկ 10-ի դեպքում էլ արձանագրել, որ ԽԿԿ արված առաջարկը առնչություն չունի տվյալ մարմնի հետ: 26-ի դեպքում ՀՀ Կառավարությունն իր ներկայացրած պատասխանում հայտնել է, որ իշխանությունները տվյալ փուլում չեն կարող առավել բարելավել տիրող իրավիճակը, որոնցից 4-ի իրագործումը կապված է եղել ֆինանսական միջոցների բացակայության հետ:

Հատկանշական է, որ 2002 թվականի զեկույցին տրված պատասխանի մեջ ՀՀ կառավարությունը ՀՀ Ոստիկանությանն առնչվող հարցերին պատասխանել է միայն մի քանի նկատառումներով (էջ 4, (CPT/Inf (2004)26), որոնք ըստ էության չեն անդրադառնում ԽԿԿ կողմից արված առաջարկություններին ու հարցերին: ՀՀ կողմից պատճառաբանվել է, որ քանի որ ԽԿԿ զեկույցում նշված դիտողությունները կոնկրետ և հստակ չեն եղել, անհնար է եղել ամբողջական պատասխան տրամադրել: Նույն հաշվետվության մեջ նշվել է նաև, որ քանի որ Հայաստանը զարգացող երկիր է, բնականաբար տվյալ ժամանակահատվածի դրությամբ ծագել են տարատեսակ ֆինանսական խնդիրներ այդ թվում քրեակատարողական ծառայությունների հետ կապված (էջ 8 (CPT/Inf (2004)26):

2004 թվականի զեկույցի վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության մեջ ԽԿԿ մի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարությունը նշել է, որ ներկայացված առաջարկությունը տվյալ մարմնի իրավասություններից դուրս է (էջ 11, CPT/Inf (2006)38)

2006 թվականի այցելության զեկույցի վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության մեջ բացակայում են զեկույցի ընդհուր թվով 6 առաջարկությունների¹ վերաբերյալ պատասխանները: Մյուս կետերի մեջ որոշ չափով արձարծվում են այս կետերի վերաբերյալ նկատառումներ, սակայն վերջնական հստակ պատասխաններ որպես այդպիսին չեն գրանցվում տվյալ կետերի առնչությամբ CPT/Inf (2006)69):

¹ ԽԿԿ զեկույցի 19-րդ, 27-րդ, 30-րդ, 32-րդ, 40-րդ և 42-րդ կետեր

2008 թվականի այցելության զեկույցի վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության մեջ բացակայում են զեկույցի 2 առաջարկությունների² վերաբերյալ պատասխանները: Մյուս կետերի մեջ որոշ չափով արձարծվում են այս կետերի վերաբերյալ նկատառումներ, սակայն վերջնական հստակ պատասխաններ որպես այդպիսին չեն գրանցվում տվյալ կետերի առնչությամբ:

2010 թվականի այցելության զեկույցի վերաբերյալ ՀՀ պատասխան հաշվետվության մեջ իսպառ բացակայում է մի առաջարկության³ պատասխան, ինչի պատճառն այն է, որ ՀՀ առողջապահության նախարարության վերաբերյալ առաջարկություններին ՀՀ կառավարությունը պատասխանել է միայն մի քանի նկատառումներով (CPT/Inf (2011)25), որոնք չեն պատասխանում ԽԿԿ կողմից արված բոլոր առաջարկություններին ու հարցերին, 9 առաջարկությունների⁴ առնչությամբ նշվում է, որ դրանք դուրս են տվյալ մարմինների իրավասություններից, 13 առաջարկությունների⁵ կապակցությամբ ՀՀ Կառավարությունը նշում է, որ դրանք ենթակա են իրագործման և ձեռնարկվում են համապատասխան քայլեր, 61-րդ կետի առաջարկություններից որոշը այս փուլում հնարավոր չէ կատարել (դրանց համար կպահանջվի 10 տարի), իսկ 103-րդ կետի առաջարկությունների իրագործումը հետաձգվել է ֆինանսական միջոցների սղության պատճառով:

² ԽԿԿ զեկույցի 29-րդ և 19-րդ կետեր

³ ԽԿԿ զեկույցի 147 կետ

⁴ ԽԿԿ զեկույցի զեկույցի 21-27-րդ, 31-րդ և 69-րդ կետեր

⁵ ԽԿԿ զեկույցի 11-րդ, 18-րդ, 37-րդ, 55-րդ, 58-րդ, 59-րդ, 62-րդ, 71-րդ, 79-րդ, 84-րդ, 92-րդ, 102-րդ, 115-րդ կետեր

4.1. ԽԿԿ 2002 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի հոդված 7-ի համաձայն, ԽԿԿ-ի պատվիրակությունը 2002 թվականի հոկտեմբերի 6-17 այցելել է Հայաստան: Այս այցելությունը ԽԿԿ կողմից իրականացված առաջին այցելությունն էր Հայաստան:

Զեկույցում տեղ են գտել ԽԿԿ կողմից տրված ընդհանուր թվով 232 առաջարկություններ, դիտողություններ և խնդրանքներ, որոնցից 58 կետ առաջարկություն՝ իրենց ենթակետերով:

ԽԿԿ պատվիրակությունն այցելություններ է իրականացրել քրեակատարողական հիմնարկներ, ժամանակավոր պահման վայրեր, ոստիկանական բաժանմունքներ, հոգեբուժական կենտրոններ, տուն-ինտերնատներ՝ գնահատելու այդ հաստատություններում պահվող անձնաց նկատմամբ վերաբերմունքը:

Ստորև ներկայացված են 2002 թվականին Հայաստան կատարված այցի ընթացքում ԽԿԿ պատվիրակության կողմից այցելված հաստատությունները և դրանց վերաբերյալ արված առաջարկությունների համառոտ նկարագրությունը:

Ներքին գործերի նախարարության իրավասության տակ մտնող հաստատություններ

Առաջարկությունները վերաբերում են մասնավորապես խոշտանգումներին և այլ տեսակի ֆիզիկական վատ վերաբերմունքին, ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի կանխման երաշխիքներին, ինչպես նաև ձերբակալված անձանց պահելու վայրերի պայմաններին:

Ազգային անվտանգության նախարարության իրավասության տակ մտնող հաստատություններ

Առաջարկությունները վերաբերում են Ազգային անվտանգության նախարարության մեկուսարանի պայմաններին:

Արդարադատության նախարարության իրավասության տակ մտնող հաստատություններ:

Առաջարկությունները վերաբերում են քրեակատարողական հիմնարկների սանիտարահիգիենիկ պայմաններին, ազատագրկման պայմաններին, կարգապահական բաժիններին, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում իրականացվող առողջապահական ծառայություններին:

Առողջապահության նախարարության իրավասության տակ մտնող հաստատություններ

Առաջարկությունները վերաբերում են հիվանդների նկատմամբ վատ վերաբերմունքի կանխման երաշխիքներին, հիվանդների կենցաղային պայմաններին, բուժմանը և

միջոցառումներին, զսպման միջոցների կիրառմանը, ինչպես նաև հարկադիր հոսպիտալացման շրջանակներում անվտանգության երաշխիքներին:

Պաշտպանության նախարարության իրավասության տակ մտնող հաստատություններ

Առաջարկությունները վերաբերում են պաշտպանության նախարարության կալանավայրերին, մասնավորապես կալանավայրերի պայմաններին և կալանավորների նկատմամբ վատ վերաբերմունքի կանխման երաշխիքներին:

4.2. ԽԿԿ 2004 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց

2004 թվականի ապրիլի 20-22-ը Հայաստան իրականացված այցելությունը Կոմիտեն համարում է «հանգամանքների պահանջով» կատարված այց, որը հանդիսանում է ԽԿԿ կողմից իրականացված երկրորդ այցը Հայաստան:

Զեկույցում տեղ են գտել ԽԿԿ-ի կողմից տրված ընդհանուր թվով 29 առաջարկություններ, դիտողություններ և խնդրանքներ, որից 11 կետ առաջարկություն՝ իրենց ենթակետերով:

Այս այցելության հիմնական նպատակն էր ուսումնասիրել, թե ինչպիսի վերաբերմունք է ցուցաբերվում կոնկրետ այն անձանց նկատմամբ, ովքեր ձերբակալվել էին ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից իրականացված ցույցերի արդյունքում: Ստորև ներկայացված են 2004 թվականին Հայաստան կատարած այցի ընթացքում ԽԿԿ պատվիրակության կողմից այցելված հաստատությունները և դրանց վերաբերյալ արված առաջարկությունների համառոտ նկարագրությունը:

Պատվիրակությունը հարցազրույցներ է ունեցել Կենտրոն քրեակատարողական հիմնարկում, Երևան քաղաքի Ներքին գործերի վարչության ձերբակալված անձանց պահելու վայրում, ինչպես նաև Երևան քաղաքի Ներքին գործերի վարչության Էրեբունի թաղամասի բաժնում, Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում և Երևան քաղաքի հիվանդանոցներում:

Այս այցելության արդյունքում հաշվետվության մեջ ԽԿԿ կողմից արված առաջարկությունները վերաբերում են մասնավորապես ազատությունից զրկված անձանց հանդեպ խոշտանգումներին և այլ տեսակ ֆիզիկական վատ վերաբերմունքին, ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի կանխման երաշխիքներին և ազատագրված վայրերի պայմաններին:

4.3. ԽԿԿ 2006 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց

ԽԿԿ 2006 թվականի այցելությունը Կոնվենցիայի վավերացումից հետո ԽԿԿ կողմից իրականացված երրորդ այցելությունն էր Հայաստան:

2006 թվականի զեկույցում տեղ են գտել ԽԿԿ կողմից տրված ընդհանուր թվով 132 առաջարկություններ, դիտողություններ և խնդրանքներ: Ինչ վերաբերում է մասնավորապես ԽԿԿ առաջարկություններին, ապա դրանք կազմում են 34 կետ՝ իրենց ենթակետերով:

ԽԿԿ պատվիրակությունն այցելել է հետևյալ վայրեր.

Ոստիկանության հաստատություններ

- ✚ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձեռքակալված անձանց պահման կենտրոն,
- ✚ Ոստիկանության Էրեբունու բաժին, Երևան,
- ✚ Ոստիկանության Կենտրոն և Նորք-Մարաշի բաժին, Երևան,
- ✚ Ոստիկանության Շենգավիթի բաժին, Երևան,
- ✚ Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն, Երևան,
- ✚ Ոստիկանության Չարենցավանի բաժին,
- ✚ Ոստիկանության Գավառի բաժին,
- ✚ Ոստիկանության Գորիսի բաժին,
- ✚ Ոստիկանության Հրազդանի բաժին,
- ✚ Ոստիկանության Սևանի բաժին,
- ✚ Ոստիկանության Սիսիանի բաժին,
- ✚ Ոստիկանության Վանաձորի բաժին,
- ✚ Ոստիկանության Բազումի բաժին, Վանաձոր,
- ✚ Ոստիկանության Եղեգնաձորի բաժին:

Քրեակատարողական հիմնարկներ

- ✚ Աբովյանի քրեակատարողական հիմնարկ,
- ✚ Գորիսի քրեակատարողական հիմնարկ,
- ✚ Նուբարաշենի քրեակատարողական հիմնարկ/ցմահ բանտարկյալների համար/,
- ✚ Վանաձորի քրեակատարողական հիմնարկ:

Հոգեբուժական հաստատություններ

- ✚ Սևանի հոգեբուժական հիվանդանոց:

Այս այցելության արդյունքում կազմված հաշվետվությամբ ԽԿԿ կողմից արված առաջարկությունները վերաբերում են մասնավորապես ազատությունից զրկված անձանց հանդեպ խոշտանգումներին և այլ տեսակ ֆիզիկական վատ վերաբերմունքին, ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի կանխման երաշխիքներին և ազատագրված անձանց պալմաններին:

4.4. ԽԿԿ 2008 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց

2008 թվականի մարտի 15-17 իրականացված այցելությունը Կոմիտեն համարում է «հանգամանքների պահանջով» կատարված այց, որը հանդիսանում է ԽԿԿ կողմից իրականացված չորրորդ այցը Հայաստան:

Այցելության գլխավոր նպատակն է եղել 2008 թվականի փետրվարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններին հաջորդած իրադարձությունների կապակցությամբ ձեռքակալված անձանց նկատմամբ վերաբերմունքի ուսումնասիրությունը:

ԽԿԿ պատվիրակությունն այցելել է Հայաստան՝ հետընտրական իրադարձությունների հետ կապված ձեռքակալվածների վիճակի, ինչպես նաև 2008 թվականի մարտի 1-ի ոստիկանության կողմից իրականացված գործողության ընթացքում կիրառած ուժի չափի մասին անմիջական տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով:

Զեկույցում տեղ են գտել ԽԿԿ կողմից տրված ընդհանուր թվով 30 հայտնաբերված փաստեր, առաջարկություններ, դիտողություններ և խնդրանքներ: Ինչ վերաբերում է մասնավորապես ԽԿԿ առաջարկություններին, ապա դրանք կազմում են 9 կետ՝ իրենց ենթակետերով:

Այցելության ընթացքում ԽԿԿ պատվիրակությունը, հետընտրական իրադարձությունների հետ կապված ձեռքակալված անձանց հետ հարցազրույց ունենալու նպատակով, այցելել է ձեռքակալվածներին և կալանավորվածներին պահելու հետևյալ վայրերը.

Քրեակատարողական հիմնարկներ՝

-  Նուբարաշենի
-  Վարդաշենի
-  Երևան-Կենտրոն:

Ոստիկանական հիմնարկներ՝

-  Երևան քաղաքի ոստիկանության ձեռքակալված անձանց պահելու վայր
-  Երևանի կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն
-  Երևանի Կենտրոն համայնքի ոստիկանական բաժանմունք:

Ազգային անվտանգության ծառայության հիմնարկներ՝

-  Ազգային անվտանգության ծառայության Երևանի ժամանակավոր մեկուսարան:

Այս այցելության արդյունքում հաշվետվության մեջ ԽԿԿ կողմից արված առաջարկությունները վերաբերում են մասնավորապես ազատությունից զրկված անձանց հանդեպ խոշտանգումներին և այլ տեսակ ֆիզիկական վատ վերաբերմունքին, ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի կանխման երաշխիքներին և ձեռքակալվածներին պահելու վայրերի պայմաններին:

4.5. ԽԿԿ 2010 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց

ԽԿԿ 2010 թվականի այցելությունը Կոնվենցիայի վավերացումից հետո ԽԿԿ կողմից իրականացված հինգերորդ այցելությունն էր Հայաստան:

Զեկույցում տեղ են գտել ԽԿԿ-ի կողմից տրված ընդհանուր թվով 169 հայտնաբերված փաստեր, առաջարկություններ, դիտողություններ և խնդրանքներ, որոնցից 60 առաջարկություն՝ իր ենթակետերով:

ԽԿԿ պատվիրակությունն այցելել է հետևյալ վայրեր.

Ոստիկանական հիմնարկներ

- ✚ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձեռքարկված անձանց պահման կենտրոն,
- ✚ Ոստիկանության Կենտրոն և Նորք-Մարաշի բաժին, Երևան,
- ✚ Ոստիկանության Նոր Նորքի բաժին, Երևան,
- ✚ Ոստիկանության Շենգավիթի բաժին, Երևան,
- ✚ Ոստիկանության Չարենցավանի բաժին,
- ✚ Ոստիկանության Գավառի բաժին,
- ✚ Ոստիկանության Սևանի բաժին,
- ✚ Ոստիկանության Աբովյանի բաժին,
- ✚ Ոստիկանության Արմավիրի բաժին,
- ✚ Ոստիկանության Էջմիածնի բաժին,
- ✚ Ոստիկանության Մարտունու բաժին,
- ✚ Ոստիկանության Վարդենիսի բաժին:

Զինվորական հաստատություններ

- ✚ Երևանի Ռազմական Ոստիկանության շտաբի մեկուսարան
- ✚ Երևանի Ռազմական Ոստիկանության կարգապահական մեկուսարան
- ✚ Հրազդանի Ռազմական Ոստիկանության կարգապահական գումարտակ
- ✚ Սևանի Ռազմական Ոստիկանության կարգապահական մեկուսարան:

Ազգային անվտանգության ծառայության հաստատություններ

- ✚ Ազգային Անվտանգության ծառայության գլխամասի կալանքի վայրեր:

Քրեակատարողական հիմնարկներ

- ✚ Կոշ քրեակատարողական հիմնարկ
- ✚ Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկ
- ✚ Քրեակատարողական հիմնարկի հիվանդանոց
- ✚ Վարդաշենի քրեակատարողական հիմնարկ:

Հոգեբուժական հաստատություններ

- ✚ Նուբարաշենի հանրապետական հոգեբուժարան
- ✚ Երևանի Նորքի հոգեբուժական կենտրոն:

Տուն-ինտերնատներ

- ✚ Վարդենիսի տուն-ինտերնատ:

5. ԽԿԿ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿՐԿՆԱԿԻ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ

5.1. ԽԿԿ 2004 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց⁶

2004 թվականի ապրիլի 20-22-ը Հայաստան կատարած այցելության արդյունքների վերաբերյալ զեկույցում ԽԿԿ-ն նորից անդրադարձ է կատարել 2002 թվականի այցելության⁷ զեկույցում արված առաջարկություններին:

ԽԿԿ կրկին անգամ արձանագրում է.

5.1.1. *Դատարանների առնչությամբ*

ԽԿԿ նշում է, որ ...երբ անձիք բողոք են ներկայացնում ոստիկանական կալանքի վերջում ոստիկանության կողմից անմարդկային վերաբերմունքի մասին, դատավորը կատարում է հայտարարության գրավոր գրանցում, անմիջապես որոշում է կայացնում բժշկական փորձաքննություն նշանակելու մասին և անհրաժեշտ քայլեր ձեռնարկում հայտարարությունների ճշգրտորեն հետաքննությունը ապահովելու ուղղությամբ: Հետագայում, նույնիսկ անմարդկային վերաբերմունքի մասին հայտարարության բացակայության դեպքում, դատավորը պետք է պահանջի բժշկական փորձաքննություն, եթե անգամ կան այլ հավատարմություններ, որ իրականացվել է անմարդկային վերաբերմունք: Կոմիտեն նաև առաջարկում է, որ այս կետերը նշվեն դատավորների մասնագիտացված վերապատրաստման ընթացքում⁸: Այս առաջարկությունը 2002 թ. այցելության զեկույցում նշված էր 21-րդ կետի տակ:

ՀՀ Կառավարությունը 2002թ. պատասխան հաշվետվության մեջ այս առաջարկության վերաբերյալ կոնկրետ պատասխան չի տվել: Քանի որ տվյալ առաջարկությունը մտնում էր Արտաքին գործերի նախարարությանն ուղղված առաջարկությունների ցանկի մեջ, ապա կառավարության պատասխան հաշվետվության մեջ այդ բոլոր առաջարկություններին տրվել է մեկ ամփոփ պատասխան, ըստ որի ԽԿԿ արված առաջարկությունների վերաբերյալ ձեռնարկվել են համապատասխան քայլեր, որոնք ուղղված են կանխարգելելու դատական նորմերի հետ կապված յուրաքանչյուր խախտում, ինչպես նաև ապահովելու մարդու իրավունքների պաշտպանությունը:⁹ Ի պատասխան 2004թ. այցելության մասին զեկույցի, հայկական իշխանությունները կարծիք են հայտնել, որ դատավորները չեն կարող ձեռնարկել ավելի ակտիվ դեր այս հարցի առնչությամբ, հաշվի առնելով, որ դատավորները չեն հանդիսանում «քրեական հետապնդում իրականացնող մարմիններ»՝ համաձայն ՀՀ ՔՂՕ 41 և 42 հոդվածների¹⁰:

⁶ Կոմիտեն այցելություն է կատարել Հայաստան 2004 թվականի ապրիլի 20-22-ը, որի վերաբերյալ հաշվետվությունը հրապարակվել է 2006 թվականի նոյեմբերի 16-ին

⁷ Կոմիտեն այցելություն է կատարել Հայաստան 2002 թվականի հոկտեմբերի 6-17-ը, որի վերաբերյալ հաշվետվությունը հրապարակվել է 2004 թվականի հուլիսի 28-ին

⁸ Կետ 15, էջ 12, 2004թ. ապրիլի 20-22-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2006)38)

⁹ Էջ 4, ՀՀ կառավարության նախնական պատասխանը 2002 թվականի հոկտեմբերի 6-17-ը Հայաստան կատարած այցելության զեկույցի վերաբերյալ, CPT/Inf (2004)26):

¹⁰ Էջ 11, ՀՀ կառավարության պատասխանը 2004թ. ապրիլի 20-22-ը Հայաստան կատարած այցելության զեկույցի վերաբերյալ, CPT/Inf (2006)39)

5.1.2. Քրեակատարողական հիմնարկների առնչությամբ

1. ԽԿԿ 2002թ. այցելության զեկույցի 22-րդ կետի առաջարկը վերաբերում է քրեակատարողական հիմնարկ նոր ժամանած կալանավորվածների բժշկական հետազոտությունների վերաբերյալ բժշկի կողմից կազմվող արձանագրությունների բնույթին: Կոմիտեն նաև կրկնում է իր առաջարկն այն մասին, որ բժշկական հետազոտությունը պետք է կատարվի ոստիկանական ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս¹¹:

Ի պատասխան նշված առաջարկության ՀՀ կառավարությունը պատասխան հաշվետվության մեջ տեղեկացրել է, որ ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների վարչության պետը քննարկում է ունեցել բուժանձնակազմի հետ, որի ընթացքում քննարկվել են զեկույցի բոլոր առաջարկները կապված բուժսպասարկման հետ և անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվել այդ թերությունները շտկելու ուղղությամբ¹²:

2. Կոմիտեն խորապես մտահոգված է երկու ցմահ դատապարտյալների վիճակով, ում նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը չափազանց շատ էր տարբերվում մյուս կալանավորների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքից: Նրանք պահվում էին առանձին խցերում, այնպիսի պայմաններում, որ ավելի շուտ մենակյաց բանտարկության էր հիշեցնում: Ավելին, նրանց շփումը արտաքին աշխարհի հետ խստորեն արգելված էր¹³: Կոմիտեն կրկնում է 2002 թվականի այցելության հաշվետվության 102-րդ կետի առաջարկությունները¹⁴:

Ի պատասխան տվյալ զեկույցի՝ ՀՀ իշխանությունները նշում են, որ քրեակատարողական հիմնարկներում վերացվել է ցմահ բանտարկյալներին առանձին խցերում պահելու կարգը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման կարգը բխում է տվյալ բանտարկյալի կամ նրա շրջապատի անվտանգությունից, կամ էլ բանտարկյալի գրավոր դիմումի և այլ երկրնտրանքի բացակայության դեպքում¹⁵:

¹¹ Կետ 16, էջ 12, 2004թ. ապրիլի 20-22-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2006)38)

¹² էջ 12, ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2004 թվականի Հայաստան կատարած այցելության զեկույցի վերաբերյալ, CPT/Inf (2006)39)

¹³ Կետ 28, էջ 16, 2004թ. ապրիլի 20-22-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2006)38)

¹⁴ Կետ 102, էջ 45, CPT/Inf (2004)25

¹⁵ էջ 15-16, ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2004 թվականի Հայաստան կատարած այցելության զեկույցի վերաբերյալ, CPT/Inf (2006)39)

5.1.3. Ոստիկանության առնչությամբ

ԽԿԿ 2002 թվականի այցելության զեկույցի 26, 29, 35, 37, 38 և 39 կետերի առաջարկությունները: Մասնավորապես դրանք վերաբերում են հետևյալ առաջարկություններին՝

- ✚ Բոլոր անձանց, ովքեր ձերբակալվել են ոստիկանության կողմից, իրավունք տրվի այդ մասին հայտնել որևէ բարեկամի կամ երրորդ կողմի:
- ✚ Ոստիկանության աշխատակիցների կողմից ապահովվի ձերբակալման պահից սկսած ձերբակալվածների փաստաբանի հետ տեսակցության իրավունքը:
- ✚ Երաշխավորվի բժշկի կողմից հետազոտվելու ձերբակալվածների իրավունքը:
- ✚ Քայլեր ձեռնարկել, որպեսզի ոստիկանական արձանագրությունները կապված ձերբակալությունների հետ պատշաճ կերպով պահպանվեն¹⁶:

Կապված այս առաջարկության հետ ՀՀ կառավարությունը պատասխան հաշվետվության մեջ տեղեկացրել է, որ ձեռնարկվել են համապատասխան քայլեր այս թերությունները շտկելու ուղղությամբ¹⁷:

5.1.4. Ձերբակալված անձանց պահելու վայրերի առնչությամբ

Երևան քաղաքի ներքին գործերի վարչության ժամանակավոր կալանավորման կենտրոնի սանիտարահիգիենիկ պայմանները մնացել էին նույնը ինչ 2002 թվականի այցելության ժամանակ, այսինքն վատ: Հետևաբար Կոմիտեն կրկնում է 2002 թվականի այցելության հաշվետվության 49-րդ կետի առաջարկությունները¹⁸՝ մասնավորապես շեշտելով տարածքի, լուսավորության, օդափոխման, հիգիենայի և վերանորոգման հետ կապված հարցերը¹⁹:

ՀՀ կողմից ներկայացված պատասխան հաշվետվության մեջ նշվում է, որ «ձերբակալվածների և կալանավորների կենսապայմանների» մասին օրենքի ընդունումից և Ոստիկանության պետի համար 8-N հրամանից հետո ձերբակալվածների կենսապայմանները էականորեն բարելավվել են²⁰:

¹⁶ Կետ 18, էջ 13, 2004 թվականի ապրիլի 20-22-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2006)38)

¹⁷ էջ 13, ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2004 թվականի Հայաստան կատարած այցելության զեկույցի վերաբերյալ, CPT/Inf (2006)39)

¹⁸ Կետ 49, էջ 31, CPT/Inf (2004)25

¹⁹ Կետ 20, էջ 14, 2004թ. ապրիլի 20-22-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2006)38)

²⁰ էջ 14, ՀՀ կառավարության պատասխանը 2004թ. Հայաստան կատարած այցելության զեկույցի վերաբերյալ, CPT/Inf (2006)39)

5.2. ԽԿԿ 2006 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց²¹

2006 թվականի ապրիլի 2-12-ը Հայաստան կատարած այցելության զեկույցում ԽԿԿ նորից անդրադարձ է կատարում նախորդ տարիների զեկույցներում արված առաջարկություններին:

ԽԿԿ-ն կրկին անգամ արձանագրում է.

5.2.1. Դատարանների առնչությամբ

ԽԿԿ նշում է, որ ...երբ անձիք բողոք են ներկայացնում ոստիկանական կալանքի վերջում ոստիկանության կողմից անմարդկային վերաբերմունքի մասին, դատավորը կատարում է հայտարարության գրավոր գրանցում, անմիջապես որոշում է կայացնում բժշկական փորձաքննություն նշանակելու մասին և անհրաժեշտ քայլեր ձեռնարկում հայտարարությունների ճշգրտորեն հատեքնությունը ապահովելու ուղղությամբ: Հետագայում, նույնիսկ անմարդկային վերաբերմունքի մասին հայտարարության բացակայության դեպքում, դատավորը պետք է պահանջի բժշկական փորձաքննություն, եթե անգամ կան այլ հավատարմություններ, որ իրականացվել է անմարդկային վերաբերմունք²²:

Այս առաջարկությունը հաջորդաբար նշվել է 2002 (կետ 21) և 2004 (կետ 15) թվականների այցելությունների ընթացքում:

Ինչպես նշված է ԽԿԿ կողմից Հայաստան կատարած այցելությունների վերաբերյալ զեկույցներում, ակնհայտ է, որ դատարանները պետք է ձեռնարկեն համապատասխան գործողություններ, երբ կան ցուցմունքներ այն մասին, որ ոստիկանության կողմից ձերբակալված անձինք ենթարկվել են անմարդկային վերաբերմունքի:

Ի պատասխան ԽԿԿ-ի 2004 թվականի այցելության մասին զեկույցի, ՀՀ կառավարությունը կարծիք է հայտնել, որ դատավորները չեն կարող ձեռնարկել ավելի ակտիվ դեր սրա առնչությամբ, հաշվի առնելով, որ դատավորները չեն հանդիսանում «հարցաքննող մարմիններ» համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ և 42-րդ հոդվածների: ԽԿԿ-ի կարծիքով սա համոզիչ պատասխան չէ²³:

2006 թվականի այցելության պատասխան հաշվետվության մեջ նույն խնդրի առնչությամբ ՀՀ իշխանությունները նշել են, որ «Դատավորները չեն հանդիսանում հարցաքննող մարմիններ» արտահայտությունը հաշվետվության մեջ տեղ է գտել ամենայն հավանականությամբ սխալ թարգմանության հետևանքով, որը չի բխում ՀՀ օրենսդրությունից և հավելել են, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ դատարանները բավականին լայն լիազորություններ ունեն քրեական գործերի քննության միջոցատակ վարույթի նկատմամբ²⁴:

²¹ Կոմիտեն այցելություն է կատարել Հայաստան 2006 թվականի ապրիլի 2-12-ը, որի վերաբերյալ հաշվետվությունը հրապարակվել է 2007 թվականի դեկտեմբերի 13-ին

²² Կետ 18, 2006 թվականի ապրիլի 2-12-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2006)69)

²³ Էջ 11, ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2004 թվականի ապրիլի 20-22-ը Հայաստան կատարած այցելության զեկույցի վերաբերյալ, CPT/Inf (2006)39)

²⁴ Էջ 7, ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2006 թվականի այցելության զեկույցի վերաբերյալ CPT/Inf (2006)69)

5.2.2. Քրեակատարողական հիմնարկների առնչությամբ

1. ԽԿԿ նշում է, որ ...Նուբարաշենի բանտի բացօթյա զբոսանքի հարմարությունները պետք է բարելավվեն (և մասնավորապես ընդլայնվեն), որպեսզի հնարավորություն տրվի, որ բանտարկյալները ֆիզիկապես մարզվեն²⁵: Այս առաջարկությունը 2002 թվականի այցելության զեկույցում նշված էր 85-րդ կետի տակ:

Այս առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարությունը պատասխանել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ցմահ ազատազրկման դատապարտվածների համար նախատեսված բազմաֆունկցիոնալ և սպորտային սենյակներից օգտվելու հնարավորություն ունեն բոլոր ցմահ ազատազրկման դատապարտվածները: Սպորտային սենյակ հաճախումները կանոնակարգելու և բոլոր ցմահ ազատազրկման դատապարտվածներին սպորտային միջոցառումներում ընդգրկելու նպատակով, կազմվել է սպորտով զբաղվել ցանկացող դատապարտյալների հաճախումների գրաֆիկ: Նշվում է նաև, որ դատապարտյալների բացօթյա զբոսանքից օգտվելու հարցը նույնպես մտահոգում է քրեակատարողական ծառայությանը: Կառավարությունը նշել է նաև, որ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի թափուր հաստիքները աստիճանաբար համալրվում են, ինչի արդյունքում ամբողջությամբ կլուծվի առաջադրված խնդիրը²⁶:

2. ԽԿԿ 2002 թվականի այցելությունից հետո (կետ 151, CPT/Inf (2004)25) կարգապահական սանկցիաները բանտարկյալների համար հիմնականում մնացել են անփոփոխ: ԽԿԿ-ն կրկնում է իր նախկին առաջարկությունը, որ քայլեր պետք է ձեռնարկվեն՝ այդ իրավունքը ձևականորեն երաշխավորելու ուղղությամբ²⁷:

ՀՀ կառավարությունը պատասխանել է, որ կալանավորված անձի կամ բանտարկյալի՝ իր կողմից կատարված կարգապահական իրավախախտումը անձամբ ներկայացնելու իրավունքը ձևականորեն սահմանված է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի» (հաստատված է ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ) 215-րդ կետում²⁸:

²⁵ կետ 47, 2006 թվականի ապրիլի 2-12-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2006)69)

²⁶ էջ 16, ՀՀ կառավարության պատասխանը 2006 թվականի այցելության զեկույցի վերաբերյալ CPT/Inf (2006)69)

²⁷ կետ 94, 2006թ. ապրիլի 2-12-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2006)69)

²⁸ էջ 26, ՀՀ կառավարության պատասխանը 2006 թվականի այցելության զեկույցի վերաբերյալ CPT/Inf (2006)69)

5.2.3. Ձերբակալված անձանց պահելու վայրերի առնչությամբ.

ԽԿԿ նշում է, որ ...պետք է համապատասխան քայլեր ձեռնարկվեն, որպեսզի ձերբակալման գրանցամատյանները պատշաճորեն պահպանվեն, դրանցում ճշտորեն կատարվեն գրառումներ ազատագրվման ժամկետի մասին (անկախ պատճառից), ազատ արձակման կամ տեղափոխման, ձերբակալման բոլոր ասպեկտների (իրավաբանի, հարազատի, բժշկի, հյուպատոսության աշխատակցի հետ հանդիպումը, հարցաքննության տանելը, ուտելիքի առաջարկման ժամկետը և այլն)²⁹: Այս առաջարկությունը նախկին հաշվետվություններում ևս նշվել է³⁰ առաջարկությունների մյուս ենթակետերի հետ: Հարկ է նշել, որ առաջարկության տեքստի մյուս ենթակետերին ԽԿԿ այլևս անդրադարձ չի կատարում:

Այս կետի վերաբերյալ ՀՀ կառավարությունը պատասխանել է, որ 2007 թվականի փետրվարի 3-ի ՀՀ ոստիկանության Կոլեգիայի նիստի արձանագրության 8-րդ կետի պահանջների համաձայն, ՁԱՊՎ-ներում կատարողական կարգապահությունը բարձրացնելու նպատակով, ՀՀ ոստիկանության ղեկավարության կողմից հանձնարարվել է քննարկել ՁԱՊՎ պետերի հաստիքները միջին կամ ավագ խմբի հաստիքի վերափոխելու խնդիրը, ինչն իր դրական ազդեցությունը կթողնի ՁԱՊՎ գործունեության կատարելագործման առումով³¹:

²⁹ Կետ 26, 2006 թվականի ապրիլի 2-12-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2006)69)

³⁰ Կետ 18, էջ 13, 2004 թվականի ապրիլի 20-22-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2006)38)

³¹ էջ 9, ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2006 թվականի այցելության զեկույցի վերաբերյալ CPT/Inf (2006)69)

5.3. ԽԿԿ 2008 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց³²

2008 թվականի մարտի 15-17-ը Հայաստան կատարած այցելության³³ վերաբերյալ զեկույցում ԽԿԿ նորից անդրադարձ է կատարում նախորդ տարիների զեկույցներում արված առաջարկություններին:

ԽԿԿ կրկին անգամ արձանագրում է.

5.3.1. Ոստիկանության առնչությամբ

1. ԽԿԿ ...կոչ է անում Հայաստանյան իշխանություններին ձեռնարկել արդյունավետ միջոցներ ձեռքարկության և, մասնավորապես ոստիկանությունում պահվելու ժամկետների վերաբերյալ իրավական դրույթների կատարումը գործնականում ապահովելու ուղղությամբ³⁴: Այս առաջարկությունը 2006թ. այցելության զեկույցում նշված էր 11-րդ կետի տակ:

Տվյալ առաջարկության վերաբերյալ ՀՀ պատասխանում նշվում է, որ 2008 թվականի մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված քրեական գործով առանձին դեպքերում ձեռքարկված անձանց ձեռքարկվածներին պահելու վայրերում 72 ժամից ավելի պահելու և կալանավորվածներին պահելու վայր ուշ տեղափոխելու վերաբերյալ հայտնում են, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված ձեռքարկված ժամկետները չեն խախտվել: Ձեռքարկված անձանց նկատմամբ օրենքով սահմանված ժամկետներում համապատասխան դատարանների որոշումներով կիրառվել է կալանավորում կամ կալանավորման հետ չկապված այլ խափանման միջոց: Հնարավոր է եղած լինեն դեպքեր, երբ դատարանի կողմից կալանավորումը կիրառելուց հետո անձը պահվել է ՁՊՎ-ում, որը պայմանավորված է անհրաժեշտ, անհետաձգելի քննչական գործողությունների կատարման և մեկուսարան ընդունելու համար պահանջվող փաստաթղթերի ստացման, նախապատրաստման հետ, ինչպես նաև զուտ տեխնիկական այլ պատճառներով: Այդուհանդերձ, դիտողությունն ընդունվել է ի գիտություն և այդ կապակցությամբ կատարվել են համապատասխան հրահանգավորումներ³⁵:

2. ԽԿԿ առաջարկել էր ՀՀ կառավարությանը ոստիկանության համար մշակել հատուկ ուսումնական ծրագիր և ապահովել համապատասխան նախապատրաստական միջոցառումներ ամբոխի նկատմամբ հսկողություն ապահովելու գործողությունների իրականացման նպատակով: Այդպիսի ուսուցման ընթացքում պետք է պարզաբանվի, որ չպետք է կիրառվի որևէ ուժ,

³² Կոմիտեն այցելություն է կատարել Հայաստան 2008 թվականի մարտի 15-17-ը, որի վերաբերյալ հաշվետվությունը հրապարակվել է 2010 թվականի մարտի 19-ին

³³ Այցելության նպատակն էր ուսումնասիրել 2004թ. մարտի 1-ի գիշերվա ընթացքում ցույցը ցրելու նպատակով ոստիկանության ներխուժման արդյունքում ձեռքարկված անձանց նկատմամբ վերաբերմունքը

³⁴ Կետ 11, էջ 10, 2008թ. մարտի 15-17-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2010)7)

³⁵ էջ 8, ՀՀ կառավարության պատասխանը 2008 թվականի մարտի 15-17-ը Հայաստան կատարած այցելության զեկույցի վերաբերյալ, CPT/Inf (2010)8)

որը խիստ անհրաժեշտ է կիրառել: Կոմիտեն նշում է, որ ուսուցումը պետք է լրացվի դրան հետևող դերքիֆինգով՝ ճշգրիտ պլանավորման, գործողությունների նկատմամբ ուղղակի հսկողության և դրանց պատշաճ կազմակերպման մասին: Կոմիտեն կրկնում է վերոհիշյալ առաջարկությունները³⁶: Այս առաջարկությունը 2004 թվականի այցելության զեկույցում նշված էր 12-րդ կետի տակ:

Այս առաջարկության կապակցությամբ ՀՀ պատասխան հաշվետվության մեջ որևէ պատասխան կամ դիտարկում չի տրվել:

3. 2006 թվականի այցելության զեկույցում ԽԿԿ մանրամասն ուսումնասիրել է վատ վերաբերմունքի դեմ ֆորմալ երաշխիքները, որոնք կիրառվում են ոստիկանության կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ (այն է ձերբակալման պատճառների մասին տեղեկացնելու իրավունքը, փաստաբանի և բժշկի իրավունքը) և մի շարք առաջարկություններ է արել՝ այդ երաշխիքներն ամրապնդելու նպատակով: Այնուամենայնիվ, 2008 թվականի մարտի այցելության ժամանակ պարզ դարձավ, որ երբ խոսքը վերաբերում է գործնականում այդ իրավունքների պաշտպանությանը, իրադրությունը թողնում է ցանկալ ավելին³⁷: Այս առաջարկությունը 2006 թվականի այցելության զեկույցում նշված էր 25-րդ կետի տակ:

ՀՀ կառավարության կողմից ներկայացված պատասխան հաշվետվության մեջ այս առաջարկության առնչությամբ նշվում է, որ դատաբժշկական քննություն անցկացնելու մասին պահանջը անմիջականորեն ձերբակալված անձանց կողմից ներկայացնելու հնարավորության վերաբերյալ հարցի ամբողջական կարգավորումը տրված է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում: Ինչպես նաև նշվում է, որ ձերբակալվածների բժշկական օգնություն ստանալու և նրանց մյուս իրավունքները, մասնավորապես նաև պաշտպան ունենալու գործընթացն ապահովելը անշեղորեն իրականացվել է³⁸:

4. ԽԿԿ կրկնում է 2006 թվականի այցելության վերաբերյալ զեկույցի 24-րդ կետում արված առաջարկությունը, այն մասին, որ ՀՀ կառավարությունը քայլեր ձեռնարկի ձերբակալված անձանց բժշկական օգնություն ստանալու իրավունքի վերաբերյալ դրույթների գործնական կիրառման արդյունավետության ապահովման ուղղությամբ: Գործող դրույթները պետք է լրացվեն այնպես, որ հստակ լինի, որ.

³⁶ կետ 19, էջ 15, 2008 թվականի մարտի 15-17-ը ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2010)7)

³⁷ կետ 22, էջ 17, 2008թ. մարտի 15-17-ը Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2010)7)

³⁸ էջ 7, ՀՀ կառավարության պատասխանը 2008 թվականի մարտի 15-17-ը Հայաստան կատարած այցելության զեկույցի վեաբերյալ, CPT/Inf (2010)8)

- ✚ բժշկի ծառայություններից օգտվելու իրավունքը գործում է de facto ազատագրվման առաջին իսկ պահից,
- ✚ ձերբակալվածների բժշկական հետազոտությունը պետք է կատարվի ոստիկանական ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս,
- ✚ բուժզննության արդյունքները պետք է գրանցվեն և տեղեկացվեն կալանավորվածին, իսկ հարկ եղած դեպքում նաև նրա փաստաբանին:
- ✚ եթե կան վնասվածքներ, որոնք ենթադրվում են, որ բռնության արդյունք են պետք է ներկայացվեն դատախազի ուշադրությանը³⁹:

ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության մեջ նշվում է, որ ապահովվել է ձերբակալված անձանց պաշտպանության, նրանց նկատմամբ դատաբժշկական կամ այլ փորձաքննություններ իրականացնելու իրավունքը: Նման դեպքերում կազմվել են համապատասխան արձանագրություններ, որոնք կցվել են քրեական գործի նյութերին: Ձերբակալվածների բժշկական օգնություն ստանալու և նրանց մյուս իրավունքները, մասնավորապես նաև պաշտպան ունենալու գործընթացն ապահովելը ՀՀ Ազգային անվտանգության ծառայության պաշտոնյաների կողմից անշեղորեն իրականացվել է: ՀՀ կառավարության կողմից ներկայացված պատասխան հաշվետվության մեջ այս առաջարկության առնչությամբ նշվում է, որ դատաբժշկական քննություն անցկացնելու մասին պահանջը անմիջականորեն ձերբակալված անձանց կողմից ներկայացնելու հնարավորության վերաբերյալ հարցի ամբողջական կարգավորումը տրված է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում: Ինչպես նաև նշվում է, որ ձերբակալվածների բժշկական օգնություն ստանալու և նրանց մյուս իրավունքները, մասնավորապես նաև պաշտպան ունենալու գործընթացն ապահովելը անշեղորեն իրականացվել է⁴⁰:

5. Ինչ վերաբերում է ոստիկանական հաստատություններին, ապա Երևան քաղաքի ոստիկանական բաժանմունքի մեկուսարանը ընդհանուր առմամբ չէր փոխվել ԽԿԿ 2006 թվականի այցելությունից հետո: Հայաստանի իշխանությունները պետք է շարունակաբար ջանքեր գործադրեն համապատասխանեցնելու ոստիկանական հաստատություններում ձերբակալվածներին պահելու պայմանները ԽԿԿ-ի նախկին այցելությունների արդյունքում ներկայացված զեկույցներում տեղ գտած հիմնական պահանջներին: Մասնավորապես, քայլեր պետք է ձեռնարկվել ապահովելու, որպեսզի.

³⁹ Կետ 25, էջ 18, 2008 թվականի մարտի 15-17-ը ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2010)7)

⁴⁰ էջ 7-8, ՀՀ կառավարության պատասխանը 2008 թվականի մարտի 15-17-ը ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության զեկույցի վերաբերյալ, CPT/Inf (2010)8)

- ✚ բոլոր խցերը, որոնք նախատեսված են ձերբակալվածներին 3 ժամից ավել պահելու համար, կահավորված լինեն գիշերելու համար հարմար բոլոր միջոցներով.
- ✚ ձերբակալված բոլոր անձանց գիշերելու համար տրամադրվեն ներքնակներ և ծածկոցներ.
- ✚ ոստիկանական հաստատություններին հատկացվի հատուկ բյուջե, ձերբակալվածներին սնունդ ապահովելու համար⁴¹:

Այս առաջարկության կապակցությամբ ՀՀ պատասխան հաշվետվության մեջ ոչ մի պատասխան չի տրվում:

⁴¹ Կետ 29, էջ 20, 2008 թվականի մարտի 15-17-ը ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2010)7)

5.4. ԽԿԿ 2010 թվականի այցելության արդյունքների վերաբերյալ զեկույց⁴²

2010 թվականի մայիսի 10-21 Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցում ԽԿԿ նորից անդրադարձ է կատարել նախորդ տարիների զեկույցներում արված առաջարկություններին:

ԽԿԿ-ն կրկին անգամ արձանագրում է.

5.4.1. Ոստիկանության առնչությամբ

1. 2008 թվականի մարտի դեպքերին հաջորդած բռնությունների հետ կապված Կոմիտեն առաջարկում է վերաբացել «Ա»-ի գործը, որը վերաբերում է ՀՔԾ-ի կողմից «Ա»-ի նկատմամբ ենթադրյալ բռնությունների կիրառմանը⁴³:

Այս առաջարկությունը առաջին անգամ նշվել է 2008 թվականի զեկույցի 14-րդ կետում:

ՀՀ պատասխան հաշվետվության մեջ նշվում է որ տվյալ կետում արժարժվող խնդիրը ոստիկանության իրավասությունից դուրս է:

2. ԽԿԿ նշում է, որ ... կապված ձերբակալվող անձիք de facto ազատագրվման առաջին իսկ պահից պետք է իրազեկվեն իրենց իրավունքների մասին⁴⁴: Այս առաջարկությունը 2008 թվականի այցելության զեկույցում նշված էր 23-րդ կետի տակ:

ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության մեջ նշվում է, որ իրոք, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ և ՀՀ ՔԴՕ 63-րդ հոդվածների միջև առկա է հակասություն. մի դեպքում սահմանված է ծանուցման 3 ժամ, մյուս դեպքում՝ ոչ ուշ, քան 12 ժամ: Հակասությունն անհրաժեշտ է վերացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելով: Միննույն ժամանակ նշվում է, որ օրենսդրական նման կոլիզիայի դեպքում գործում է ձերբակալվածի համար առավել բարենպաստ նորմը՝ այսինքն 3 ժամյա ծանուցման դրույթը:

ՀՀ ոստիկանությունը երախտապարտ կլինեք, որպեսզի ոստիկանության ծառայողների կողմից պատշաճ չծանուցման դեպքերի վերաբերյալ CPT պատվիրակությունը իրազեկեր ՀՀ ոստիկանությանը՝ ծառայողական քննություններ անցկացնելու նպատակով⁴⁵:

⁴² Կոմիտեն այցելություն է կատարել Հայաստան 2010 թվականի մայիսի 10-21-ը, որի վերաբերյալ հաշվետվությունը հրապարակվել է 2011 թվականի օգոստոսի 17-ին

⁴³ Կետ 23, էջ 21, 2010 թվականի մայիսի 10-21 ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2011)24)

⁴⁴ Կետ 29, էջ 23, 2010 թվականի մայիսի 10-21 Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2011)24)

⁴⁵ ՀՀ կառավարության պատասխանը 2010 թվականի ԽԿԿ-ի այցելության զեկույցի 29-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25)

3. Կոմիտեն անդրադառնում է 2006 (կետ 24) և 2008 (կետ 25) թվականներին արված առաջարկություններին և դիմում է ՀՀ կառավարությանը միջոցներ ձեռնարկելու պահանջով, այդ թվում իրավական, որպեսզի հստակորեն նշվեն հետևյալ կետերը.

- ✚ բժշկի ծառայություններից օգվելու իրավունքը գործում է de facto ազատագրկման առաջին իսկ պահից,
- ✚ ձերբակալվածների բժշկական հետազոտությունը պետք է կատարվի ոստիկանական ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս,
- ✚ բուժզննության արդյունքները պետք է գրանցվեն և տեղեկացվեն կալանավորվածին, իսկ հարկ եղած դեպքում նաև նրա փաստաբանին:
- ✚ եթե կան վնասվածքներ, որոնք ենթադրվում են, որ բռնության արդյունք են, պետք է ներկայացվեն դատախազի ուշադրությանը⁴⁶:

ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության մեջ նշվում է, որ «Ձերբակալված և կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն «ձերբակալված անձը իրավունք ունի առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին: Ինչ վերաբերում է ձերբակալվածին դատաբժշկի կողմից զննվելուն, ապա նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն «ձերբակալված կամ կալանավորված անձը, իսկ ձերբակալված կամ կալանավորված անձի համաձայնության դեպքում նաև նրա պաշտպանը իրավունք ունեն պահանջելու անցկացնել դատաբժշկական հետազոտություն»: ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշման 13-րդ կետի համաձայն՝ «Ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի: Հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել նաև ձերբակալված անձի ցանկությամբ ընտրված բժիշկը: Բժշկական զննությունն իրականացվում է ՁՊԿ-ի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում, անձնական գործում եւ դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին: Ի դեպ, «Ձերբակալված եւ կալանավորված անձնաց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ձերբակալված անձը իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի

⁴⁶ Կետ 34, էջ 25, 2010 թվականի մայիսի 10-21 ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2011)24)

վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին եւ կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաեւ մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին⁴⁷:

5.4.2. Քրեակատարողական հիմնարկների առնչությամբ

1. ԽԿԿ նշում է, որ ...բոլոր կալանավորված անձիք պետք է իրազեկվեն իրենց իրավունքների մասին ձեռքարկված առաջին իսկ պահից: Ինչ վերաբերում է իրավունքների մասին տեղեկատվական ձևաթղթերին, ապա դրանք պետք է պարբերաբար տրվեն ձեռքարկված անձանց այն պահից, երբ նրանք բերման են ենթարկվում ոստիկանական բաժանմունք⁴⁸: Այս առաջարկությունը 2008 թվականի այցելության զեկույցում նշված էր 23-րդ կետի տակ:

ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության մեջ նշվում է, որ ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է ձեռքարկված անձանց ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերելիս անհապաղ կազմել Էլեկտրոնային արձանագրություն, կիրառելով ոստիկանության համացանցին միացված հայելային դիսփլեյով համակարգիչներ: Բացի այդ, նախատեսվում է մշակել ոստիկանության ստորաբաժանումներ բերված անձանց իրավունքների վերաբերյալ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով հուշաթերթիկներ⁴⁹:

2. ԽԿԿ նշում է, որ ...Նուբարաշենի հոգեբուժական հիվանդանոցում պետք է իրականացվեն թերապևտիկ և վերականգնողական սոցիալ-հոգեբանական միջոցառումներ: Ինչպես նաև Նորքի հոգեբուժական կենտրոնում անհրաժեշտ է բարելավել թերապևտիկ միջոցառումների կիրառումը և ավելի շատ հիվանդներ ընդգրկել: Պատանի հիվանդների համար պետք է նախատեսել հատուկ ծրագիր, այդ թվում նաև կրթական: Քայլեր պիտի ձեռնարկվեն յուրաքանչյուր հիվանդի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելու նկատմամբ⁵⁰: Այս առաջարկությունը 2002 թվականի այցելության զեկույցում նշված էր 167-րդ կետի տակ:

⁴⁷ ՀՀ կառավարության պատասխանը 2010 թվականի այցելության զեկույցի 34-րդ կետի վերաբերյալ ընդգրկված է 33-րդ կետի վերաբերյալ նկատառումների մեջ)

⁴⁸ կետ 36, էջ 26, 2010 թվականի մայիսի 10-21 ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2011)24)

⁴⁹ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվություն, 2010 թվականի այցելության զեկույցի 9-րդ կետի վերաբերյալ նկատառումներ

⁵⁰ կետ 141, էջ 62, 2010 թվականի մայիսի 10-21 Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2011)24)

ՀՀ պատասխան հաշվետվության մեջ Նուբարաշենի հոգեբուժարանի առնչությամբ մեկնաբանությունն չի տրվում, իսկ Նորքի կլինիկայի մասին նշվում է, որ 6-րդ բաժանմունքին կից կառուցվել է ցանկապատ տարածք, որտեղ փորձաքննվողները զբոսնում են և կարող են զբաղվել մարմնամարզությամբ: Զսպման միջոցները օգտագործվում են հազվադեպ՝ համաձայն ՀՀ ԱՆ հրամանով հաստատված կարգի: Հոգեկան խանգարումներով հիվանդների բուժումը և խնամքը կազմակերպվում է համաձայն «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի պահանջների⁵¹:

5.4.3. Հոգեբուժական հիմնարկների առնչությամբ

1. ԽԿԿ նշում է, որ ...հոգեբուժական հիմնարկներում հիվանդների բուժումը պետք է բարելավվի՝ շեշտը դնելով թերապևտիկ և վերականգնողական միջոցառումների վրա, այդ թվում օկուպացիոն թերապիա, խմբակային և անհատական հոգեթերապիա և հնարավոր կրթական և աշխատանքային միջոցառումներ: Սա կպահանջի համապատասխան սարքավորումների տեղադրում հիվանդասենյակներում և անհատական բուժման ծրագրերի մշակում⁵²: Այս առաջարկությունը 2002 թվականի այցելության զեկույցում նշված էր 178-րդ կետի տակ:

ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության մեջ նշվում է, որ ՀՀ առողջապահության նախարարության հետ սերտ համագործակցության շրջանակներում կազմակերպվում են հանրապետության առաջատար հոգեբույժների կողմից խորհրդատվություններ⁵³:

2. ԽԿԿ նշում է, որ ...պիտի քայլեր ձեռնարկվեն կապված հոգեբուժական հիմնարկներում ոչ կամովին հոսպիտալացման հետ:
 - ✚ Համապատասխան օրենսդրությամբ սահմանել ոչ կամովին հոսպիտալացման անհրաժեշտության չափանիշները
 - ✚ Առնվազն վեց ամիսը մեկ անգամ վերանայել ոչ կամովին հոսպիտալացման որոշումները⁵⁴:

Այս առաջարկությունը 2006 թվականի այցելության զեկույցում նշված էր 122-րդ կետի տակ:

ՀՀ պատասխան հաշվետվության մեջ այս խնդիրների առնչությամբ պատասխան չի տրվել:

⁵¹ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվություն, ՀՀ առողջապահության նախարարության նկատառումներ CPT/Inf (2011)25)

⁵² կետ 114, էջ 52, 2010 թվականի մայիսի 10-21 ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2011)24)

⁵³ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվություն, ՀՀ առողջապահության նախարարության նկատառումներ CPT/Inf (2011)25)

⁵⁴ կետ 147, էջ 64, 2010 թվականի մայիսի 10-21 Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2011)24)

3. ԽԿԿ նշում է, որ ...պետք է քայլեր ձեռնարկվեն, որպեսզի Հոգեբանական օգնության օրենքի դրույթները կապված ոչ կամովին քաղաքացիական հոսպիտալացման հետ պատշաճ կերպով իրականացվեն գործնականում: Սա կներառի բոլոր շահագրգիռ համակրգերի և մարդկանց համար ուսուցողական դասընթացների անցկացում⁵⁵: Այս առաջարկությունը 2006 թվականի այցելության զեկույցում նշված էր 122-րդ կետի տակ:

ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության Նորքի հոգեբուժական կլինիկայի վերաբերյալ հայտնում են, որ հոգեբուժական ստացիոնար ընդունվելիս հիվանդները տալիս են իրենց գրավոր համաձայնությունը, բացառությամբ այն հիվանդների, որոնք ընդունվում են ոչ հոժարակամ՝ դատարանի որոշման համաձայն: Ինչպես նաև նշվում է, որ ՀՀ ԱՆ հրավերով Ֆրանսիայից ժամանած մասնագետները ներկայումս անց են կացնում թվով 25 բուժքույրերի վերապատրաստում⁵⁶:

4. ԽԿԿ նշում է, որ... հոգեբուժական հիմնարկներում պետք է կազմվեն ներածական գրքույքներ, որտեղ պետք է նշվեն հիվանդանոցների օրակարգը և հիվանդների իրավունքները: Այս գրքույկները այնուհետև պիտի տրվեն հիվանդներին և նրանց ընտանիքներին⁵⁷: Այս առաջարկությունը 2006 թվականի այցելության զեկույցում նշված էր 128-րդ կետի տակ:

ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության մեջ նշվում է, որ բոլոր կլինիկաներում հոգեկան խանգարում ունեցող հիվանդները ծանոթանում են անվճար իրավաբանական ծառայությունների հետ կապված իրենց իրավունքներին և նշանակված բուժման հետ, ինչի համար ստորագրում են և նշված փաստաթուղթը կցվում է հիվանդության պատմագրի մեջ⁵⁸:

⁵⁵ կետ 148, էջ 65, 2010 թվականի մայիսի 10-21 Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2011)24

⁵⁶ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվություն, ՀՀ առողջապահության նախարարության նկատառումներ CPT/Inf (2011)25

⁵⁷ կետ 151, էջ 66, 2010 թվականի մայիսի 10-21 Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույց, CPT/Inf (2011)24

⁵⁸ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվություն, ՀՀ առողջապահության նախարարության նկատառումներ CPT/Inf (2011)25

6. ԽԿԿ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

6.1. ՀՀ Ոստիկանության վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.

Կոմիտեի առաջարկության տեքստը.

1. Ձերբակալված անձանց de facto ազատագրվման առաջին իսկ պահից իրազեկել իրենց իրավունքների մասին⁵⁹:
2. Բոլոր կալանավորված անձիք պետք է իրազեկվեն իրենց իրավունքների մասին ձերբակալման առաջին իսկ պահից: Ինչ վերաբերում է իրավունքների մասին տեղեկատվական ձևաթղթերին, ապա դրանք պետք է պարբերաբար տրվեն ձերբակալված անձանց այն պահից, երբ նրանք բերման են ենթարկվում ոստիկանական բաժանմունք⁶⁰:

Կրկնվող առաջարկության տարեթիվը.

Առաջին անգամ այս երկու առաջարկությունները գրանցվել են 2008 թվականի մարտի 15-17-ը ԽԿԿ Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցի մեջ:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

ՀՀ Կառավարությունը երկու հարցերին էլ տվել է նույն պատասխանը, այն է.

Իրոք, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածների միջև առկա է հակասություն. մի դեպքում սահմանված է ծանուցման 3 ժամ, մյուս դեպքում՝ ոչ ուշ, քան 12 ժամ: Հակասությունն անհրաժեշտ է վերացնել ՀՀ քր. դատ. օր.-ում փոփոխություն կատարելով: Մինևնույն ժամանակ պետք է նշել, որ օրենսդրական նման կոլիզիայի դեպքում գործում է ձերբակալվածի համար առավել բարենպաստ նորմը՝ այսինքն 3 ժամյա ծանուցման դրույթը:

ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության մեջ նշվում է, որ ՀՀ ոստիկանությունը երախտապարտ կլիներ, եթե ոստիկանության ծառայողների կողմից պատշաճ չծանուցման դեպքերի վերաբերյալ ԽԿԿ պատվիրակությունը իրազեկեր ՀՀ ոստիկանությանը՝ ծառայողական քննություններ անցկացնելու նպատակով⁶¹:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

ՀՀ ոստիկանությունում նախատեսվում էր մշակել ոստիկանության ստորաբաժանումներ բերված անձանց իրավունքների վերաբերյալ հայերեն, ռուսերեն և

⁵⁹ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 29-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁶⁰ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 36-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁶¹ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 29-րդ և 36-րդ կետերի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

անգլերեն լեզուներով հուշաթերթիկներ (բուկլետներ): Մշակվել են արդյո՞ք նշված հուշաթերթիկները և եթե այո, ապա խնդրում եմ տրամադրել դրա օրինակը:

Պատասխանի համառոտ տեքստը.

ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերման ենթարկված անձանց իրավունքների և պարտականությունների մասին հուշաթերթիկներ կան փակցված ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների տարածքային բոլոր ստորաբաժանումների հերթապահ մասերում և ՁՊՎ-ներում:

Բացի այդ, ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակում 19.09.2011 թվականին ստորագրվել և գործածության մեջ է դրվել ՀՀ ոստիկանության պետի թիվ 2505-Ա հրամանով հաստատված «Անձանց բերման ենթարկելիս ոստիկանության ծառայողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ» ուղեցույցը, որում հստակ ամրագրված են նաև բերված անձանց իրավունքներն ու պարտականությունները:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ոստիկանության պատասխանից երևում է, որ ԽԿԿ կողմից կատարված առաջարկությունների ուղղությամբ իրականացվել են կոնկրետ քայլեր, որոնք միտված են ձեռքակալված և կալանավորված անձանց իրավունքների մասին իրազեկմանը de facto ազատագրված առաջին իսկ պահից: Սակայն ՌԴԿ հարցման պատասխանին կից վերոհիշյալ հուշաթերթիկի/բուկլետի օրինակ չի տրամադրվել: Դեռ ավելին, ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներից և ոչ մեկում առկա չէ բերման ենթարկված անձանց իրավունքների և պարտականությունների մասին ռուսերեն կամ անգլերեն լեզվով հուշաթերթիկներ:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

3. ԽԿԿ կոչ է անում Հայաստանի իշխանություններին քայլեր ձեռնարկել, որպեսզի ձեռքակալման արձանագրությունները կազմվեն առանց ուշացումների, ինչպես նաև ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, որոնք կապահովեն որպեսզի արձանագրությունները հստակ ներկայացնեն ձեռքակալման և ոստիկանության բաժանմունք բերման ենթարկելու ժամերը⁶²:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Դեռևս 2006 թվականին ոստիկանության իրավաստեղծ նախաձեռնությամբ ՀՀ ՔԴՕ լրացվել է 131.1. հոդվածով, որը երաշխավորում է փաստացի ձեռքակալված անձանց նկատմամբ 3 ժամվա ընթացքում քրեական գործ հարուցելու և դատավարական ձեռքակալում իրականացնելու հնարավորությունը: Հարցի հետ ուղղակիորեն առնչվում է ոստիկանության կողմից կիրառվող բերման ենթարկելու գործողության իրավաչափությունը, որը գործնականում չի դիտվում իբրև ձեռքակալում՝ դրանից բխող բացասական հետևանքներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս

⁶² ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 9-րդ կետ, CPT /Inf (2011)25

մշակվում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ, ուստի բերման ենթարկելու պահից ձերբակալման արձանագրություն կազմելու գործընթացը կկանոնակարգվի նոր օրենսդրության շրջանակներում:

Ներկայումս ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է ձերբակալված անձանց ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերելիս անհապաղ կազմել էլեկտրոնային արձանագրություն, կիրառելով ոստիկանության համացանցին միացված հայելային դիսփլեյով համակարգիչներ: Բացի այդ, նախատեսվում է մշակել ոստիկանության ստորաբաժանումներ բերված անձանց իրավունքների վերաբերյալ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով հուշաթերթիկներ (բուկլետներ)⁶³:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում նախատեսվում էր, որ ձերբակալված անձանց ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերելիս անհապաղ պետք է կազմվի էլեկտրոնային արձանագրություն, կիրառելով ոստիկանության համացանցին միացված հայելային դիսփլեյով համակարգիչներ: Գործում է արդյո՞ք նշված համակարգը և եթե այո, ապա երբ է այն ներդրվել ՀՀ ոստիկանության համակարգում, իսկ եթե դեռևս չի գործում, ապա ՀՀ ոստիկանությունը ե՞րբ է նախատեսում նշված համակարգի ներդրումն ու գործարկումը:

Պատասխանի համառոտ տեքստը.

ՀՀ ոստիկանությունում էլեկտրոնային արձանագրության կազմման և ՀՀ ոստիկանության համացանցին միացված հայելային դիսփլեյով համակարգիչների ցանց ներկայումս չի գործում:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ոստիկանության պատասխանից երևում է, որ իրականացվող բարեփոխումների շրջանակներում էլեկտրոնային արձանագրություն կազմելու համակարգ ներդրված չէ, ավելին, ոստիկանության համացանցին միացված հայելային դիսփլեյով համակարգիչներ չեն տեղադրվել: Այսպիսով, ՀՀ ոստիկանության կողմից խոստացված համակարգը ներդրված չէ, իսկ ԽԿԿ կողմից արված առաջարկությունը և մտահոգությունները գործնականում մնացել են չիրականացված:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

4. Կոմիտեն առաջարկում է ոստիկանների համար նախատեսված շարունակական դասընթացների միջոցով պայքարել կոռուպցիայի և պաշտոնական դիրքի չարաշահման դեպքերի դեմ⁶⁴:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Լիովին գիտակցելով խնդրո առարկայի կարևորությունը, ՀՀ ոստիկանության պետի

⁶³ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 9-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

⁶⁴ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 11-րդ կետ, CPT /Inf (2011)25

09.12.2009թ. թիվ 3140-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ոստիկանությունում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիր: Միննույն ժամանակ, ՀՀ ոստիկանության ղեկավարության նախաձեռնությամբ ՀՀ ոստիկանության Ակադեմիայում և Ոստումնական կենտրոնում դասավանդվող առարկաների ցանկում ներառվել է «Ոստիկանության էթիկա» ուսումնական առարկան: Բացի այդ, թե ՀՀ-ում և թե արտասահմանյան մի շարք երկրներում ոստիկանության ծառայողները շարունակաբար մասնակցում են նմանատիպ թեմաներով կազմակերպվող դասընթացների: Նշված թեմաները ընդգրկված են նաև ստորաբաժանումներում անցկացվող ծառայողական պարապմունքների թեմատիկ պլաններում:

Ներկայումս ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների ծրագրի շրջանակներում մշակվում է ոստիկանության ծառայողների հակակոռուպցիոն վարքագծի ուղեցույց:

Այս ամենով հանդերձ, ՀՀ ոստիկանությունը հայտնում է իր պատրաստակամությունը ոստիկանության ծառայողների կողմից կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ CPT պատվիրակության կողմից առարկայական տեղեկատվություն տրամադրելու դեպքում կատարել ծառայողական քննություններ և մեղավոր ծառայողներին ենթարկել համարժեք պատասխանատվության⁶⁵:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

- ✚ ՀՀ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների ծրագրի շրջանակներում նախատեսվում էր ոստիկանության ծառայողների հակակոռուպցիոն վարքագծի ուղեցույցի մշակում: Մշակվել է արդյո՞ք ոստիկանության ծառայողների հակակոռուպցիոն վարքագծի ուղեցույց, եթե այո խնդրում եմ տրամադրել ուղեցույցի օրինակը:
- ✚ ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ ԽԿԿ պատվիրակության կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա 2010-2011 թվականների ընթացքում քանի՞ ծառայողական քննություն է կատարվել, քանի՞ ծառայող է պատասխանատվության ենթարկվել և պատասխանատվության ի՞նչ միջոցներ են կիրառվել:

Պատասխանի համառոտ տեքստը.

- ✚ ՀՀ ոստիկանության ծառայողների հակակոռուպցիոն վարքագծի ուղեցույցը ներկայումս մշակման վերջնական փուլում է:
- ✚ ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ նշված ժամանակահատվածում ԽԿԿ պատվիրակության կողմից տեղեկատվություն ՀՀ ոստիկանություն չի ներկայացվել, հետևաբար տվյալներ չկան այդ ուղղությամբ անցկացված ծառայողական քննությունների վերաբերյալ:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ոստիկանության պատասխանից երևում է, որ ՀՀ ոստիկանությունը խոստացված

⁶⁵ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 11-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

հակակոռուպցիոն վարքագծի ուղեցույցը դեռևս չի մշակվել, չնայած ՀՀ կառավարության պատասխանը ներկայացնելուց հետո անցել է շուրջ երկու տարի: Ինչ վերաբերում է ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ ծառայողական քննությունների անցկացմանը, ապա ՀՀ ոստիկանությունը նշված խնդրի վերաբերյալ ծառայողական քննություններ չի անցկացրել՝ պատճառաբանելով, որ նշված ժամանակահատվածում ԽԿԿ պատվիրակության կողմից տեղեկատվություն ՀՀ ոստիկանություն չի ներկայացվել: Այսպիսով, ՀՀ ոստիկանության կողմից խոստացված հակակոռուպցիոն վարքագծի ուղեցույցը դեռևս չի մշակվել, իսկ կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ ծառայողական քննություններ չեն անցկացվել:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

5. 2010 թվականի այցելության ժամանակ պատվիրակությանը հայտնի էին դարձել պնդումներ՝ կապված ձերբակալվածների նկատմամբ ուժ գործադրելու և վատ վերաբերմունքի հետ:
6. Կոմիտեի 2010 թվականի այցելության ընթացքում գրանցվել են ոստիկանականության ծառայողների կողմից հարցաքննվողների նկատմամբ ենթադրյալ խոշտանգումների և այլ տեսակի բռնությունների դեպքեր⁶⁶:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

ՀՀ Կառավարությունը երկու հարցերին էլ տվել է նույն պատասխանը, այն է. ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից վերաբերմունք դրսևորելու, առավել ևս՝ խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դեպք ՀՀ ոստիկանությունում դառնում է լայն քննարկման առարկա, մեղավոր անձինք ենթարկվում են խիստ կարգապահական պատասխանատվության: Այսպես, 2010 թվականի ընթացքում ստացվել է ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի վերաբերյալ 81 բողոք (2009թ.՝ 245), որոնց քննությամբ հիմնավորվել են 19-ը (2009թ.՝ 37): Կատարված ծառայողական քննությունների արդյունքում ոստիկանության 23 ծառայող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (2009թ.՝ 51), 4 ծառայող՝ քրեական պատասխանատվության (2009թ.՝ 2): Ի դեպ, քրեական պատասխանատվության կանչված 1 ոստիկանության ծառայող դատապարտվել է ազատազրկման, 1 ծառայող՝ կալանքի, իսկ 2 ծառայողի նկատմամբ վճռվել է նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան: Ինչ վերաբերում է 2010 թվականի ապրիլի 17-ին Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի տարածքում հանցավոր «պարզաբանմանը» մասնակից 53 անձանց բերման ենթարկելու լայնամասշտաբ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառմանը, ապա դրան մասնակից ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների

⁶⁶ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 12-րդ կետ, CPT /Inf (2011)25

համազգեստի վրա առկա են եղել համապատասխան տարբերանշաններ (տե՛ս, www.alplus.am լրատվամիջոցի էլեկտրոնային կայքի, 17.04.2010 թվականին տեղադրված լուսանկարները): Ի դեպ, բերման ենթարկված անձանց մոտից առգրավվել է 13 միավոր հրազեն, 8 միավոր սառը զենք և զգալի քանակությամբ ռազմամթերք: Հասարակական կարգի պահպանությունն ապահովող ոստիկանության ծառայողների համազգեստի վրա անձնապես նույնականացնող համարանիշերի կիրառումն ապահովելու նպատակով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում 22.12.2010թ.-ին կատարվել է համապատասխան լրացում, իսկ 23.03.2011 թվականին ՀՀ ոստիկանության պետի կողմից ստորագրվել է թիվ 34-Ա հրամանը, որով սահմանվել է ոստիկանության ծառայողների նույնականացման համարանիշերի կիրառման կարգը⁶⁷:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

5. 2011 թվականի ընթացքում քանի՞ բողոք է ստացվել ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի վերաբերյալ, քանի՞ բողոք է հիմնավորվել քննության արդյունքում, քանի՞ ծառայողական քննություն է անցկացվել, քանի՞ քրեական գործ է հարուցվել և պատասխանատվության ի՞նչ միջոցներ են կիրառվել:

6. 2011 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից թույլ տրված տարբեր օրինախախտումների փաստերով քանի՞ քրեական գործ է հարուցվել ոստիկանության ծառայողների նկատմամբ, որոնցից քանի՞սն են դատապարտվել:

Պատասխանի համառոտ տեքստը.

5. ՀՀ ոստիկանության պետի 17.08.2010 թվականի «ՀՀ ոստիկանության համակարգում ստացված դիմումների, բողոքների հաշվառման և դրանց արդյունքների վերաբերյալ միասնական հաշվետվություն ներկայացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 1747-Ա հրամանի համաձայն, ըստ կատարված հաշվառումների, ՀՀ ոստիկանության ծառայողների դեմ ընթացիկ տարում ստացվել է 339 բողոք, որոնք չեն դասակարգվում ըստ բովանդակության, ուստի դժվար է ասել, թե դրանցից քանիսն են վերաբերում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից և արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքին:

6. ՀՀ ոստիկանության պետի 20.12.2007 թվականի թիվ 2694-Ա և 07.05.2010 թվականի թիվ 947-Ա հրամանների համաձայն, ոստիկանության ծառայողների կարգապահական պրակտիկայի և նրանց կողմից կատարված օրինախախտումների հաշվառում իրականացվում է եռամսյակային կտրվածքով, ուստի տվյալ պահի դրությամբ կարող ենք ներկայացնել միայն 9 ամսվա տվյալներ, ըստ որոնց ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում ոստիկանության ծառայողների նկատմամբ հարուցվել է 46 քրեական գործ՝ 53 անձով, որոնցից դատարան է ուղարկվել 7 քրեական գործ, դատապարտվել են՝ 6-ը:

⁶⁷ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 12-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ոստիկանության պատասխանից երևում է, որ ԽԿԿ-ի կողմից կատարված առաջարկությունների ուղղությամբ իրականացվել են որոշակի քայլեր, որոնք միտված են ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից օրինախախտումների դեպքերի կրճատմանը: Սակայն հատկանշական է, որ ՀՀ ոստիկանության ծառայողների դեմ ստացած բողոքները չեն դասակարգվում ըստ խախտումների, ինչի արդյունքում հնարավոր չէ փաստել, որ ՌԴԿ-ն ստացել է ըստ էության բովանդակային պատասխան: Դեռ ավելին, ՌԴԿ-ի փորձը ցույց է տալիս, որ ձերբակալվածների նկատմամբ ուժ գործադրելու և վատ վերաբերումների դեպքերի հետ կապված ՀՀ ոստիկանությունը հիմնականում բավարարվում է ծառայողական քննությունների անցկացմամբ, մինչդեռ նշված խախտումները պետք է քննվեն քրեական հետապնդման շրջանակներում և հանգեն մեղավոր անձանց քրեական պատասխանատվությանը:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

7. Կոմիտեն առաջարկում է վերանայել էլեկտրահարող միջոցների գործադրման դեպքերը, ուղղումներ մտցնել համապատասխան օրենքների մեջ: Կոմիտեն ցանկություն է հայտնել 2009 և 2010 թվականների համար ստանալ հետևյալ տեղեկատվությունը.

- ✚ Ոստիկանության ծառայողների կողմից հատուկ միջոցների հատկապես էլեկտրահարող միջոցների գործադրման դեպքերի քանակը
- ✚ Նման միջոցների գործադրման արդյունքում վնասվածքների կամ մահվան դեպքերի մասին իրավասու մարմիններին ներկայացված հաշվետվությունների քանակը⁶⁸:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Հատուկ միջոցների, այդ թվում՝ էլեկտրահարող սարքերի կիրառման վերաբերյալ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում 2010թ. դեկտեմբերի 22-ին կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես՝ արգելվել է ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկելը, որոնք ըստ իրենց մարտավարատեխնիկական բնութագրերի՝ կարող են մարդու առողջությանը պատճառել ծանր վնաս կամ մարդու օրգանիզմում առաջացնել անդառնալի փոփոխություններ կամ մահ պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր են: Բացի այդ, մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու պարտականությունը օրենքով վերապահվել է ՀՀ առողջապահության նախարարությանը: Օրենքով հստակեցվել են նաև էլեկտրահարող սարքերի, կայծային պարալիչների կիրառման հիմքերը (տես՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերը): Հատուկ միջոցների տեսակները ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկվել են

⁶⁸ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 16-րդ կետ, CPT /Inf (2011)25

ՄԱԿ-ի «Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց կողմից ուժի և հրազենի գործադրման հիմնական սկզբունքների» 2-րդ կետին համապատասխան, համաձայն որի՝ իրավապահ մարմինները նախատեսելու են ոստիկանության սպառազինության այնպիսի տեսակներ, որոնք մահացու չեն, բացառապես ունեն վտանգը չեզոքացնող և վնասագերծող հատկություն, և գործադրվում են վիրավորելու կամ մահ պատճառելու հնարավորությունները սահմանափակելու նպատակով: Ոստիկանության աշխատակիցները ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու համար պարբերաբար անցնում են հատուկ պատրաստություն:

Ոստիկանության կողմից կայծային պարպիչներ գործադրելու և դրա հետևանքով մարմնական վնասվածքների վերաբերյալ ՀՀ ոստիկանությունում տեղեկություններ չեն ստացվել⁶⁹:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Ոստիկանության աշխատակիցները ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու համար ի՞նչ հատուկ պատրաստություն են անցնում և ի՞նչ պարբերականությամբ:

Պատասխանի համառոտ տեքստը.

ՀՀ ոստիկանության աշխատակիցները ՀՀ ոստիկանության պետի 03.12.2010 թվականի թիվ 2615-Ա «Ծառայողական պարապմունքների կազմակերպման և անցկացման մասին» և 15.12.2010թ. թիվ 2690-Ա «Մարտական և ֆիզիկական պատրաստականության պարապմունքների կազմակերպման մասին» հրամանների համաձայն, իրենց ստորաբաժանումներում պարբերաբար, շաբաթվա որոշակի օրերին անց են կացնում տեսական և գործնական պարապմունքներ, իսկ պարեկապահակետային ծառայության և հատուկ նշանակության ստորաբաժանման աշխատակիցները ֆիզիկական վարժանքներով և հնարքների կատարելագործմամբ զբաղվում են ամեն օր:

Բացի այդ, ՀՀ ոստիկանության պետի 11.10.2011թ. թիվ 2760-Ա հրամանով հաստատվել և ստորաբաժանումներին է փոխանցվել «Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման» ուղեցույցը՝ ծառայողական և գործնական պարապմունքների ժամանակ դրանով առաջնորդվելու համար:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ոստիկանության պատասխանից երևում է, որ ԽԿԿ-ի կողմից կատարված առաջարկությունների ուղղությամբ իրականացվել են կոնկրետ քայլեր, ընդունվել է ՀՀ ոստիկանության պետի 03.12.2010 թվականի թիվ 2615-Ա «Ծառայողական պարապմունքների կազմակերպման և անցկացման մասին» և 15.12.2010թ. թիվ 2690-Ա «Մարտական և ֆիզիկական պատրաստականության պարապմունքների

⁶⁹ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 16-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

կազմակերպման մասին» հրամանները, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի 11.10.2011թ. թիվ 2760-Ա հրամանով հաստատվել և ստորաբաժանումներին է փոխանցվել «Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման» ուղեցույցը՝ ծառայողական և գործնական պարապմունքների ժամանակ դրանով առաջնորդվելու համար: Սակայն հիմք ընդունելով հայաստանյան իրականությունը, անհրաժեշտ է արձանագրել, որ մշակված և ընդունված իրավական ակտերը դեռևս չեն երաշխավորում դրանց արդյունավետ իրավակիրարկումը:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

8. ԽԿԿ-ն ցանկություն է հայտնել ստանալ մանրամասն տեղեկատվություն կապված ոստիկանության ծառայողների համազգեստի վրա անձնապես նույնականացնող համարանիշների կիրառման մասին⁷⁰:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Հասարակական կարգի պահպանությունն ապահովող ոստիկանության ծառայողների համազգեստի վրա անձնապես նույնականացնող համարանիշների կիրառումն ապահովելու նպատակով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում 22.12.2010 թվականին կատարվել է համապատասխան լրացում, իսկ 23.03.2011 թվականին ՀՀ ոստիկանության պետի կողմից ստորագրվել է թիվ 34-Ագ հրամանը, որով սահմանվել է ոստիկանության ծառայողների նույնականացման համարանիշների կիրառման կարգը⁷¹:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են կրել սահմանված ձևի համազգեստ, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ: Խնդրում եմ տրամադրել ՀՀ ոստիկանության ծառայողների նույնականացման համարանիշների կիրառման կարգը, ինչպես նաև տեղեկատվություն այն մասին, թե երբ է նշված կարգը ներդրվել:

Պատասխանի համառոտ տեքստը.

Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ոստիկանության պետի կողմից 23.03.2011 թվականի թիվ 34-Ագ հրամանով հաստատվել և գործածության մեջ է դրվել հասարակական կարգի պահպանություն և հասարակական անվտանգության ապահովում իրականացնող ՀՀ ոստիկանության

⁷⁰ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 17-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁷¹ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 12-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

ծառայողների նույնականացման համարանիշների կիրառման կարգը, ինչը տրամադրել չենք կարող գաղտնի լինելու պատճառով:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ոստիկանության պատասխանից երևում է, որ ԽԿԿ կողմից կատարված առաջարկությունների ուղղությամբ իրականացվել են որոշակի քայլեր, ընդունվել է ՀՀ ոստիկանության պետի կողմից 23.03.2011 թվականի թիվ 34-Ագ հրամանով հաստատվել և գործածության մեջ է դրվել հասարակական կարգի պահպանություն և հասարակական անվտանգության ապահովում իրականացնող ՀՀ ոստիկանության ծառայողների նույնականացման համարանիշների կիրառման կարգը: Սակայն ոստիկանության այն հիմնավորումը, որ տվյալ հրամանը գաղտնի է, վերջինիս զրկում է իր արժեքավորությունից, քանի որ եթե տվյալ հրամանը հասնալի չէ ցանկացած անձի համար, հետևաբար վերջինս չի կարող իմանալ, թե ինչպիսին է ՀՀ ոստիկանության ծառայողների նույնականացման համարանիշի տիպային օրինակը, դրա կրելու կարգը և այլն:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

9. Կոմիտեն առաջարկում է ոստիկանության համակարգում փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող ծառայողների վերապատրաստման ծրագրի մշակում: Առաջարկվում է շեշտը հատկապես դնել փաստերի վրա, ոչ թե սահմանափակվել միայն հարցաքննության արդյունքներով: Ինչպես նաև վերապատրաստման դասընթացների անցակցում՝ կապված հարցաքննության անցկացման կարգի հետ⁷²:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

ՀՀ ոստիկանության համակարգում փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ, փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող ծառայողների վերապատրաստման, մասնագիտական որակների բարձրացման և կատարելագործման նպատակով ՀՀ ոստիկանության պետի 01.02.2011 թվականի թիվ 3-5 ցուցումի համաձայն ՀՀ ոստիկանության քննչական և հետաքննական լիազորություններ ունեցող ծառայողները սահմանված գրաֆիկին համապատասխան, տեղերում պետք է մասնակցեն «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող դասընթացներին: Բացի այդ, նշված ծառայողների տեսագործական գիտելիքները բարելավելու նպատակով ՀՀ ոստիկանության Ակադեմիայում կազմակերպվում են վերապատրաստման ամենամյա դասընթացներ: Ինչ վերաբերում է հարցաքննության տեխնիկայի կատարելագործմանը, ապա ՀՀ ոստիկանության բարեփոխումների ծրագրի 27-րդ կետով նախատեսված է ստեղծել հայելապատ սենյակներ, իսկ ՀՀ ՔԴՕ 209-րդ հոդվածի համաձայն՝

⁷² ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 18-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

հարցաքննվող անձի ցանկությամբ հարցաքննության ընթացքը կարող է ձայնագրվել:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Ստեղծվել են արդյո՞ք ՀՀ ոստիկանության բարեփոխումների ծրագրի 27-րդ կետով նախատեսված հայելապատ սենյակները, եթե այո, ապա խնդրում եմ տրամադրել տեղեկություն, թե ՀՀ ոստիկանության ո՞ր բաժիններում կան այդպիսի սենյակներ:

Պատասխանի համառոտ տեքստը.

ԱՄՆ դեսպանության աջակցությամբ ՀՀ ոստիկանության Կազմապերպված հանցագործության դեմ պայքարի գլխավոր վարչությունում կստեղծվի տեսաձայնագրման (հայելային) սենյակ: Այդ նպատակով Կազմապերպված հանցագործության դեմ պայքարի գլխավոր վարչության մասնաշենքի 7-րդ հարկում հատկացվել է առանձին սենյակ, որտեղ արդեն տեղադրվել է համապատասխան հայելի, իսկ անհրաժեշտ մյուս տեխնիկական սարքավորումներով կահավորելու կապակցությամբ ձեռք է բերվել պայմանավորվածություն:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ոստիկանության պատասխանից երևում է, որ ԽԿԿ-ի կողմից կատարված առաջարկությունների ուղղությամբ չեն իրականացվել բավարար քայլեր, քանի որ բացի ՀՀ ոստիկանության Կազմապերպված հանցագործության դեմ պայքարի գլխավոր վարչությունում ստեղծվելիք տեսաձայնագրման (հայելային) սենյակի հայելին տեղադրելուց այլ բան դեռևս չի իրականացվել: ՌԴԿ-ն հույս է հայտնում, որ ՀՀ ոստիկանության կողմից խոստացված ՀՀ ոստիկանության Կազմապերպված հանցագործության դեմ պայքարի գլխավոր վարչությունում ստեղծվելիք տեսաձայնագրման (հայելային) սենյակը կկահավորվի և կգործարկվի հնարավորինս սեղմ ժամկետներում: Սակայն կարևոր է ընդգծել, որ միայն սենյակի ստեղծմամբ առկա հիմնախնդիրը չի լուծվի:

6.2. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերաբերյալ ներկայցված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.

Կոմիտեի առաջարկության տեքստը.

1. Քայլեր ձեռնարկել Վարդենիսի տուն-ինտերնատի գերբնակեցվածության հարցի լուծման ուղղությամբ⁷³:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

ՀՀ Կառավարությունն այս խնդրին չի անդրադարձել:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Ինչպիսի քայլեր են ձեռնարկվում Վարդենիսի տուն-ինտերնատի գերբնակեցվածության խնդրի լուծման առնչությամբ:

Պատասխանի համառոտ տեքստը.

2010 թվականին Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի 4-րդ մասնաշենքի բնակելի տարածքների վերակառուցման արդյունքում ստեղծվել է 5 նոր սենյակ՝ 48 քառ.մ և 2011 թվականին՝ և նոր սենյակ՝ 74 քառ. մ. բնակելի մակերեսներով: Տուն-ինտերնատի տարածքում 2 հարկանի վարչական մասնաշենքի կառուցման համար կազմվել է նախագիծ-նախահաշիվ, ինչը ևս կնվազեցնի գերբեռնվածությունը:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանից երևում է, որ ԽԿԿ-ի կողմից կատարված առաջարկությունների ուղղությամբ իրականացվել են որոշակի քայլեր, որոնք միտված են գերբնակեցվածության նվազեցմանը, սակայն չտիրապետելով թվային կոնկրետ տվյալներին (մասնավորապես նշված չէ, թե հաստատությունը քանի պացիենտ ընդունելու հնարավորություն ունի և փաստացի քանիսն են բնակեցված, ինչպես նաև, թե նոր ստեղծված սենյակները այդ անձանցից քանիսի բնակեցման խնդիրն է լուծում) անհարին է խոսել այլ քայլերի բավարար կամ արդյունավետ լինելու մասին:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

2. Յուրաքանչյուր բնակչի համար մշակել անհատական ծրագիր, որը կներառի բուժման մանրամասները⁷⁴:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Ինչպես արդեն ի սկզբանե պարզաբանվել է՝ Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատը բժշկական հաստատություն չէ, այլ համաձայն ՀՀ Կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 1874-Ն որոշման, նախատեսված է 18 տարին լրացած քրոնիկ հոգեկան հիվանդություն կամ մտավոր հետամնացություն ունեցող հաշմանդամների, ծերունական փսիխոզով, ծանր արտահայտված սկլերոզով

⁷³ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 157-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁷⁴ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 161-րդ կետ, CPT /Inf (2011)25

տառապող անձանց շուրջօրյա խնամքի, սոցիալական սպասարկման և մշտական բնակության համար, տուն-ինտերնատի յուրաքանչյուր խնամվողի համար լրացվում է սոցիալ-հոգեբանական անհատական վերականգնման քարտ, որտեղ նշվում են, թե վերականգնման ինչ միջոցառումներ են իրականացվում սոցիալական աշխատողի և հոգեբանի կողմից: Ինչ վերաբերում է խնամվողի բժշկական քարտին, ապա բոլոր խնամվողներն ունեն անհատական բժշկական քարտեր, որտեղ բժշկի կողմից կատարվում են համապատասխան գրառումներ նշանակված բուժական միջոցառումների, դեղորայքի վերաբերյալ: Անհատական բժշկական քարտերը պահվում են բժշկի մոտ⁷⁵:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Նախատեսվում էր մշակել մտավոր առողջության ազգային համապարփակ ծրագիր, որը կլրացնի հոգեբուժական բժշկա-սոցիալական հաստատություններում առկա բացերը: Արդյո՞ք մշակվել է նման ծրագիր, եթե այո՝ խնդրում եմ, տրամադրել նշված ծրագրի օրինակը և մանրամասն տեղեկատվություն:

Պատասխանի համառոտ տեքստը.

Այս հարցին պատասխան չի տրվել:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանում բացակայում է ՌԴԿ-ի կողմից հայցվող տեղեկատվության պատասխանը, որի պարագայում դժվար է գնահատել, թե խոստացված մտավոր առողջության ազգային համապարփակ ծրագիրը մշակվել է թե ոչ: Տվյալ պարագայում, գտնում ենք, որ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իր ստանձնած պարտավորությունը չի կատարել և չի մշակել մտավոր առողջության ազգային համապարփակ ծրագիրը, քանի որ այն մշակված լինելու պարագայում՝ կիրառարակվեր և ի պատասխան ՌԴԿ-ի հարցմանը կտրամադրվեր:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

3. Յուրաքանչյուր տիպի ֆիզիկական կամ քիմիական զսպման միջոցի կիրառում պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում:
4. Մշակել և իրականացնել հատուկ ծրագիր կապված զսպման միջոցների կիրառման կարգի հետ⁷⁶:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

ՀՀ Կառավարությունը երկու հարցերին էլ տվել է նույն պատասխանը, այն է.

Համաձայն «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի, հոգեբուժական կազմակերպություններում գտնվող՝ ոչ հոծարակամ հոսպիտալացված հոգեկան խանգարմամբ տառապող անձի նկատմամբ կարող են կիրառվել ֆիզիկական զսպման

⁷⁵ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 161-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

⁷⁶ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 163-րդ կետ, CPT /Inf (2011)25

(գոտիներ, հատուկ հագուստներ) ու մեկուսացման միջոցներ և հանդարտեցման բժշկական մեթոդներ միայն հոգեբույժի պատճառաբանված որոշմամբ, որոնց կիրառման և տևողության մասին բժշկական փաստաթղթերում կատարվում են համապատասխան գրառումներ:

Վարդենիսի տուն-ինտերնատում ևս պահպանվում է վերը նշված կարգը, բացառությամբ գոտիների և հատուկ հագուստների կիրառման: Տուն-ինտերնատում հիմնականում զսպման միջոցները քիմիական են, այսինքն՝ դեղորայքային, որը նշանակվում է հոգեբույժի որոշմամբ և ինչի մասին կատարվում է համապատասխան գրառում հատուկ մատյանում, որը պահվում է գլխավոր բժշկի մոտ: Ելնելով խնամվողի ազդեցիկ վարքագծից կարող է որոշվել նաև նրան ժամանակավորապես մեկուսացնել⁷⁷:

ՌԿԿ հարցման համառոտ տեքստը.

3. Արդյո՞ք Վարդենիսի տուն-ինտերնատում բոլոր տիպի զսպան (ֆիզիկական և այլ) միջոցների կիրառման դեպքերը գրանցվում են համապատասխան գրանցամատյաններում, եթե այո՝ խնդրվում է տրամադրել տեղեկատվություն գրանցման կարգի վերաբերյալ:

4. Նախատեսվում էր տուն-ինտերնատներում մշակել հստակ քաղաքականություն զսպման միջոցների իրականացման առնչությամբ: Արդյո՞ք նշված քաղաքականությունը մշակվել է, եթե այո՝ խնդրվում է տրամադրել փաստաթղթի օրինակը և մանրամասն տեղեկատվություն դրա վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

3. Վարդենիսի տուն-ինտերնատում խնամվողների նկատմամբ զսպման միջոցներից կիրառվում է ֆիզիկական և դեղորայքային միջոցները: Զսպման մեթոդները նշանակվում են բժշկի կողմից, գրանցվում համապատասխան մատյանում և միաժամանակ նաև հիվանդության պատմության մեջ, համաձայն «Հոգեբանության օգնության մասին» ՀՀ օրենքի:

4. Վարդենիսի տուն-ինտերնատի համար զսպման միջոցների իրականացման առնչությամբ որևէ քաղաքականություն չի մշակվել, տուն-ինտերնատը ղեկավարվում է ինչպես սոցիալական պաշտպանության, այնպես էլ հոգեբուժական օգնության ոլորտում գործող ՀՀ օրենսդրությամբ:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանից երևում է, որ որոշ քայլեր ձեռնարկվել են խնամվողների նկատմամբ զսպման միջոցների (ֆիզիկական և դեղորայքային) կիրառման պարագայում այդ մասին համապատասխան մատյանում և միաժամանակ նաև հիվանդության պատմության մեջ գրանցվելու նպատակով: Չնայած ձեռնարկված քայլերին, նախարարությունը չի մշակել խոստացված զսպման միջոցների իրականացման հստակ քաղաքականությունը, ինչը էականորեն կարող էր ազդել ԽԿԿ կողմից բարձրացված խնդիրների լուծման վրա:

⁷⁷ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 163-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

6.3. ՀՀ Ազգային անվտանգության ծառայության վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.

Կոմիտեի առաջարկության տեքստը.

1. ԱԱԾ աշխատակիցներին զգուշացնել, որ ձեռքարկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի ցուցաբերումը անթույլատրելի է և ենթակա է խիստ պատժի⁷⁸:
2. Քայլեր ձեռնարկել ԱԱԾ աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման բարելավման ուղղությամբ՝ մասնավորապես շեշտը դնելով կասկածյալների հարցաքննման միջոցների վրա⁷⁹:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Քրեական գործերով կասկածյալների հետ գործ ունեցող ՀՀ ԱԱԾ աշխատակիցները պարբերաբար հրահանգավորվում են կասկածյալների/կալանավորվածների նկատմամբ վատ վերաբերմունքի անթույլատրելիության և դրա հետ կապված պատասխանատվության ենթարկվելու մասին⁸⁰:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

ՀՀ ԱԱԾ-ն նախատեսվում էր իրականացնել աշխատակիցների պրոֆեսիոնալ վերապատրաստում կասկածյալների հարցաքննման վերաբերյալ: Իրականացվել է արդյո՞ք նման վերապատրաստում, եթե այո՝ խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

ԱԱԾ նախատեսվում է իրականացնել աշխատակիցների պրոֆեսիոնալ վերապատրաստում կասկածյալների հարցաքննությունների վերաբերյալ, որն իրականացվել է քննիչների վերապատրաստման ընթացքում, ինչպես նաև ԱԱԾ քննչական վարչությունում կազմակերպված քննարկումների ժամանակ:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱԱԾ պատասխանից երևում է, որ ԱԱԾ աշխատակիցների կողմից հարցաքննությունների իրականացնելու համար պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացումը իրականացվել է քննիչների վերապատրաստման ընթացքում, ինչպես նաև ԱԱԾ քննչական վարչությունում կազմակերպված քննարկումների ժամանակ: Այսպիսով, ԱԱԾ-ն պատասխանել է ԽԿԿ միայն այն մտահոգությանը, որը վերաբերում է աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման բարելավմանը, սակայն անտեսվել է ձեռքարկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի ցուցաբերման դեպքերի բացահայտման և խիստ պատժելուն ուղղված ԽԿԿ մտահոգությունը, որը հիմք է տալիս ենթադրելու, որ նշված խնդիրը կրկին անգամ կբարձրացվի ԽԿԿ ապագա այցելությունների արդյունքում:

⁷⁸ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 56-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁷⁹ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 57-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁸⁰ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 56-րդ և 57-րդ կետերի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

6.4. ՀՀ առողջապահության նախարարության վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.

Կոմիտեի առաջարկության տեքստը.

1. Քայլեր ձեռնարկել Նուբարաշենի հանրապետական հոգեբուժարանում հետևյալ բացերը լրացնելու ուղղությամբ.

- ✚ ավելացնել անձնակազմի թիվը
- ✚ իրականացնել 7-րդ հիվանդասենյակի հոգեբույժների և քույրերի քանակի ավելացում,
- ✚ իրականացնել անձնակազմի համար նախատեսված վերապատրաստումներ, այդ թվում հիվանդների իրավունքների վերաբերյալ դասընթացներ⁸¹:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

ՀՀ ԱՆ հրավերով Ֆրանսիայից ժամանած մասնագետները ներկայումս անց են կացնում թվով 25 բուժքույրերի վերապատրաստում:

Անձնակազմի թիվը և կառուցվածքը հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ համաձայն գոյություն ունեցող կարգի:

Անձնակազմի թիվը և կառուցվածքը հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ համաձայն գոյություն ունեցող կարգի⁸²:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

1. Արդյո՞ք իրականացվել է Նուբարաշենի հանրապետական հոգեբուժական կենտրոնի 7-րդ հիվանդասենյակի հոգեբույժների և քույրերի քանակի ավելացում: Խնդրում եմ, տրամադրել մանրամասն տեղեկատվություն:
2. Արդյո՞ք հուբեգուժական հաստատությունների անձնակազմի համար կազմակերպվում են ընթացիկ դասընթացներ հոգեբուժության վերաբերյալ, այդ թվում հիվանդների իրավունքների վերաբերյալ: Խնդրում եմ, տրամադրել մանրամասն տեղեկատվություն:

Պատասխանի համառոտ տեքստը.

1. 2012 թվականին Նուբարաշենի հոգեբուժական կենտրոնի 7-րդ բաժնում հոգեբույժների և բուժքույրերի քանակի ավելացում չի նախատեսվում:
2. Հուբեգուժական հաստատությունների անձնակազմի համար կազմակերպվում են ընթացիկ դասընթացներ՝ կլինիկաների ղեկավարների և գլխավոր քույրերի կողմից:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ կառավարության և առողջապահության նախարարության պատասխաններից երևում է, որ ԽԿԿ-ի կողմից բարձրացված խնդիրներին ըստ էության պատասխաններ չեն տրվել: Ավելին, փորձ է արվել ԽԿԿ մտահոգությունները «ցրել» ընդհանրական

⁸¹ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 137-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁸² ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 137-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

պատասխանների միջոցով, որը բնավ չի խոսում կառուցողական համագործակցության և ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման մասին: ՌԴԿ-ի հարցմանն ի պատասխան ՀՀ առողջապահության նախարարության պատասխանից երևում է, որ ԽԿԿ-ի կողմից բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ որևէ միջոցառում չի իրականացվել և չի էլ նախատեսվում:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

2. Կոմիտեն կրկնում է իր առաջարկությունը կապված Նուբարաշենի հոգեբուժական հիվանդանոցում թերապևտիկ և վերականգնողական սոցիալ-հոգեբանական միջոցառումների իրականացման հետ: Ինչպես նաև Նորքի հոգեբուժական կենտրոնում անհրաժեշտ է բարելավել թերապևտիկ միջոցառումների կիրառումը և ավելի շատ հիվանդներ ընդգրկել: Պատանի հիվանդների համար պետք է նախատեսել հատուկ ծրագիր, այդ թվում նաև կրթական: Քայլեր պիտի ձեռնարկվեն յուրաքանչյուր հիվանդի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելու նկատմամբ:
3. Կոմիտեն կրկին նշում է, որ հոգեբուժական հիմնարկներում հիվանդների բուժումը պետք է բարելավվի՝ շեշտը դնելով թերապևտիկ և վերականգնողական միջոցառումների վրա, այդ թվում օկուպացիոն թերապիա, խմբակային և անհատական հոգեթերապիա և հնարավոր կրթական և աշխատանքային միջոցառումներ: Սա կպահանջի համապատասխան սարքավորումների տեղադրում հիվանդասենյակներում և անհատական բուժման ծրագրերի մշակում⁸³:

Կրկնվող առաջարկության տարեթիվը.

2-րդ առաջարկությունն առաջին անգամ նշվել է 2006 թվականի այցելության զեկույցում:
3-րդ առաջարկությունն առաջին անգամ առաջարկվել է դեռևս 2002 թվականի ԽԿԿ այցելության զեկույցում:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Երկու առաջարկություններին էլ պատասխան չի տրվել:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

2. Արդյո՞ք զարգացվել են Նուբարաշենի հոգեբուժական հիվանդանոցում և Նորքի հոգեբուժական կլինիկայում թերապևտիկ և սոցիալ-հոգեբանական միջոցառումների հնարավորությունները և արդյո՞ք պատանի հիվանդների հանդեպ իրականացվում է հատուկ նախատեսված ծրագիր: Խնդրում եմ, տրամադրել մանրամասն տեղեկատվություն:
3. Արդյո՞ք մշակվել է յուրաքանչյուր հիվանդի նկատմամբ անհատական մոտեցման ծրագիր, եթե այո խնդրում եմ, տրամադրել մանրամասն տեղեկատվություն:

⁸³ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 141-րդ կետ, CPT /Inf (2011)25

Պատասխանի համառոտ տեքստը.

2. Նուբարաշենի և Նորքի կլինիկաներում հիվանդների բուժմանը մասնակցում են և հոգեբաններ և այլ նեղ մասնագետներ: Ինչ վերաբերում է պատանի հիվանդներին, ապա, նրանք սպասարկվում են Նորքի կլինիկայում գործող մանկական բաժնում, որը մասնագիտացված բաժանմունք է և որտեղ աշխատում են որակյալ հոգեբույժներ և հոգեբաններ:

3. Հոգեբուժական ծառայությունում յուրաքանչյուր հիվանդ կարիք ունի և ստանում է անհատական մոտեցում և բուժում:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ կառավարությունը ԽԿԿ-ի առաջարկությունների վերաբերյալ որևէ պատասխան չի տրել, իսկ ՌԴԿ-ի հարցմանն ի պատասխան ՀՀ առողջապահության նախարարության պատասխանից երևում է, որ Նուբարաշենի հոգեբուժական հիվանդանոցում և Նորքի հոգեբուժական կլինիկայում թերապևտիկ և սոցիալ-հոգեբանական միջոցառումների հնարավորությունները չեն զարգացվել, ավելին պատանի հիվանդների բուժման վերաբերյալ չի կազմվել հատուկ նախատեսված ծրագիր: Չի մշակվել նաև յուրաքանչյուր հիվանդի նկատմամբ անհատական մոտեցման առաջարկվող ծրագիրը: Այսպիսով, ՀՀ առողջապահության նախարարությունը չի կատարել ԽԿԿ-ի կողմից առաջարկվող գործողությունները, որոնք կատարելու դեպքում դրական փոփոխություններ կգրանցվեին տվյալ բնագավառում:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

4. Ավելացնել Նորքի հոգեբուժական կլինիկայի անձնակազմ/հիվանդ հարաբերակցությունը:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Անձնակազմի թիվը և կառուցվածքը հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից համաձայն գոյություն ունեցող կարգի⁸⁴:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Արդյո՞ք իրականացվել է Նորքի հոգեբուժական կլինիկայի անձնակազմ/հիվանդ հարաբերակցության ավելացում: Խնդրում եմ, տրամադրել մանրամասն տեղեկատվություն:

Պատասխանի համառոտ տեքստը.

Նորքի կլինիկայում անձնակազմի ավելացում 2012 թվականին չի նախատեսվում:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ առողջապահության նախարարության պատասխանից երևում է, որ Նորքի հոգեբուժական կլինիկայի անձնակազմ/հիվանդ հարաբերակցությունը ավելացնելու ԽԿԿ առաջարկությունն անտեսվել է: Նշված առաջարկության ուղղությամբ քայլեր չեն

⁸⁴ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 138-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

ձեռնարկվել և ապագայում էլ չեն նախատեսվում: Այսպիսով, ՀՀ առողջապահության նախարարությունը չի կատարել ԽԿԿ-ի կողմից առաջարկվող գործողությունները, որոնք կատարելու դեպքում դրական փոփոխություններ կգրանցվեին տվյալ բնագավառում:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

5. Համապատասխան օրենսդրության մեջ հստակ նշել ոչ կամովին հոսպիտալացման չափանիշները, և պարբերաբար վերանայել ոչ կամովին հոսպիտալացման վերաբերյալ որոշումները⁸⁵:
6. Կոմիտեն կրկին նշում է, որ պետք է քայլեր ձեռնարկվեն, որպեսզի Հոգեբուժական աջակցության օրենքի դրույթները կապված ոչ կամովին քաղաքացիական հոսպիտալացման հետ պատշաճ կերպով իրականացվեն գործնականում, այդ թվում ներգրավված բոլոր մարդկանց և մարմինների համար դասընթացների անցկացում (ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 148-րդ կետ, CPT /Inf (2011)25):

Կրկնվող առաջարկության տարեթիվը.

Երկու առաջարկություններն էլ առաջին անգամ նշվել են 2006 թվականի այցելության զեկույցում:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

ՀՀ Կառավարությունը այս հարցերին հստակ պատասխան չի տվել:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Արդյո՞ք ոչ կամովին հոսպիտալացման չափանիշները սահմանվել են համապատասխան օրենսդրության մեջ և արդյո՞ք հոգեբուժական միջամտության մասին օրենքը պրակտիկորեն կիրառություն է գտնում: Խնդրում եմ, ներկայացնել կիրառության օրինակներ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Ոչ կամովին հոսպիտալացման չափանիշները սահմանված են «Հոգեբուժական օգնության» մասին ՀՀ օրենքով: Օրենքն ամենօրյա արդյունավետ կիրառություն ունի: Մեկ օրինակ՝ բոլոր ստացիոնարներում դատարանի որոշմամբ գտնվում են ոչ հոժարակամ հոսպիտալացված անձինք, որոնց դատական նիստը կայանում է հիվանդանոցում իրենց ներկայացուցչի կամ դատապաշտպանի ներկայությամբ:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ առողջապահության նախարարության պատասխանով հստակ չի երևում թե ինչպես են իրականացվել ԽԿԿ-ի կողմից ներկայացված առաջարկները, արդյո՞ք պարբերաբար վերանայվել են ոչ կամովին հոսպիտալացման վերաբերյալ որոշումները կամ արդյո՞ք հոգեբուժական աջակցության օրենքի դրույթները կապված ոչ կամովին քաղաքացիական հոսպիտալացման հետ պատշաճ կերպով իրականացվում են

⁸⁵ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 147-րդ կետ, CPT /Inf (2011)25

գործնականում, այդ թվում ներգրավված բոլոր մարդկանց և մարմինների համար դասընթացների անցկացումը: Այսպիսով, ՀՀ առողջապահության նախարարությունը չի կատարել ԽԿԿ կողմից առաջարկվող գործողությունները, որոնք կատարելու դեպքում դրական փոփոխություններ կգրանցվեին տվյալ բնագավառում:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

7. Կազմել ներածական գրքույկներ, որտեղ կնշվեն հոբեբուժական հիվանդանոցների օրակարգը, հիվանդների իրավունքները և որոնք կտրվեն հիվանդներին ու իրենց ընտանիքներին⁸⁶:

Կրկնվող առաջարկության տարեթիվը.

Այս առաջարկությունը առաջին անգամ նշվել է 2006 թվականի այցելության զեկույցում:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Բոլոր կլինիկաներում հոգեկան խանգարում ունեցող հիվանդները ծանոթանում են անվճար իրավաբանական ծառայությունների հետ կապված իրենց իրավունքներին և նշանակված բուժման հետ, ինչի համար ստորագրում են և նշված փաստաթուղթը կցվում է հիվանդության պատմագրի մեջ⁸⁷:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Նախատեսվում էր կազմել ներածական գրքույկներ, որտեղ պիտի նշվեին հոբեբուժական հիվանդանոցների օրակարգը, հիվանդների իրավունքները և որոնք պիտի տրվեին հիվանդներին ու իրենց ընտանիքներին: Արդյո՞ք նշված գրքույկները կազմվել են և արդյո՞ք դրանք պարբերաբար տրվում են հիվանդներին ու նրանց ընտանիքների անդամներին: Խնդրում եմ, տրամադրել նշված գրքույկի օրինակը:

Պատասխանի համառոտ տեքստը.

ՀՀ առողջապահության նախարարի 29.07.2010 թվականի թիվ 14-Ն հրամանով հաստատված է հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների իրազեկման թերթիկը:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ առողջապահության նախարարության պատասխանից երևում է, որ ՀՀ առողջապահության նախարարի 29.07.2010 թվականի թիվ 14-Ն հրամանով հաստատվել է հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների իրազեկման թերթիկը, սակայն այն չի տրամադրվել ՌԴԿ հարցման պատասխանին կից, ուստի նշված իրազեկման թերթիկի բովանդակության վերաբերյալ կարծիք արտահայտելուց զերծ ենք մնում:

⁸⁶ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 151-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁸⁷ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 151-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

Կոմիտեի առաջարկության տեքստը.

8. Ապահովել, որպեսզի հոգեբուժական հիմնարկներում պահվող հիվանդները պարբերաբար տեղեկացվեն իրենց վերաբերյալ կայացվող հոգեբուժական հանձնաժողովի և դատարանի որոշումների մասին⁸⁸:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

ՀՀ Կառավարությունն այս հարցին հստակ պատասխան չի տվել:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Արդյո՞ք հոգեբուժական հիմնարկներում պահվող հիվանդները պարբերաբար տեղեկացվում են իրենց վերաբերյալ կայացվող հոգեբուժական հանձնաժողովի և դատարանի որոշումների մասին, ինչպես նաև ստանում են արդյո՞ք այդ որոշումների պատճենները:

Պատասխանի համառոտ տեքստը.

Հոգեբուժական հիմնարկներում բուժվող հիվանդները պարբերաբար տեղեկացվում են իրենց վերաբերյալ հոգեբուժական հանձնաժողովի և դատարանի որոշումների մասին, ինչպես նաև ստանում են այդ որոշումների պատճենները:

Եզրահանգում/Նշում.

Չնայած նրան, որ ՀՀ կառավարությունը նշված առաջարկին հստակ պատասխան չի տվել, ՀՀ առողջապահության նախարարությունը ի պատասխան ՌԴԿ-ի հարցմանը նշել է, որ հոգեբուժական հիմնարկներում բուժվող հիվանդները պարբերաբար տեղեկացվում են իրենց վերաբերյալ հոգեբուժական հանձնաժողովի և դատարանի որոշումների մասին, ինչպես նաև ստանում են այդ որոշումների պատճենները:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

9. Ապահովել, որպեսզի մեխանիկական զսպման միջոցների կիրառումը չիրականացվի մյուս հիվանդների ներկայությամբ, այլ իրագործվի հատուկ նախատեսված սենյակներում⁸⁹:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

ՀՀ Կառավարությունն այս հարցին սպառնալիք պատասխան չի տվել:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Նախատեսվում էր մեխանիկական զսպման միջոցներ չկիրառել մյուս հիվանդների ներկայությամբ, այլ իրագործել հատուկ նախատեսված սենյակներում: Արդյո՞ք նշված միջոցառումները ձեռնարկվում են պատշաճ կերպով և ի՞նչ փոփոխություններ են արվել ներկայացվող խնդրի լուծման ուղղությամբ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Մեխանիկական զսպման միջոցներ մեր պրակտիկայում կիրառվում են խիստ

⁸⁸ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 146-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁸⁹ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 145-րդ կետ, CPT /Inf (2011)25

հազվադեպ, հիմնականում միջամտությունների կաբինետներում, որտեղ չկան ուրիշ հիվանդներ: Այն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 03.05.2010 թվականի թիվ 691-Ա հրամանով հաստատված հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հոգեկան խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման կիրառման ուղեցույցի համաձայն:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ առողջապահության նախարարության պատասխանից երևում է, որ մեխանիկական զսպման միջոցները պրակտիկայում կիրառվում են խիստ հազվադեպ, հիմնականում միջամտությունների կաբինետներում, որտեղ չկան ուրիշ հիվանդներ: Նշված պատասխանից կարելի է եզրահանգել, որ ԽԿԿ-ի առաջարկությունը պրակտիկայում իրականացվում է: Մինչդեռ կարևոր է նշել, որ նյարդահոգեբուժական հաստատություններում մշտադիտարկում իրականացնող «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը ևս փաստում է, որ զսպման միջոցները սովորաբար կիրառվում են հենց պացիենտների սենյակներում, ավելին գրանցվում են դեպքեր, երբ մյուս պացիենտներն են օգնում բուժակներին այդպիսի միջոցների կիրառումն ապահովելուն:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

10. Նուբարաշենի հանրապետական հոգեբուժական կենտրոնի հիվանդների համար ստեղծել անհատականացված միջավայր և նրանց տրամադրել անհատական փակվող տարածք իրենց իրերը պահելու համար⁹⁰:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Նախատեսվում է կլինիկայում կատարել վերանորոգման աշխատանքներ և բարելավել հիվանդների կենցաղային պայմանները՝ ֆինանսավորման առկայության դեպքում⁹¹:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Նախատեսվում էր Նուբարաշենի հանրապետական հոգեբուժական կենտրոնի հիվանդների համար ստեղծել անհատականացված միջավայր և նրանց տրամադրել անհատական փակվող տարածք իրենց իրերը պահելու համար: Արդյո՞ք կատարվել են նշված միջոցառումները: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայում ներկայիս պայմաններում հնարավոր չէ կատարել կապիտալ վերանորոգման աշխատանքներ. մասնավորապես հարկադիր բուժման հիվանդների համար ստեղծել անհատական միջավայր: Ինչ վերաբերում է հիվանդների իրերին, ապա նրանք գտնվում են տվյալ բաժնի քույր-տնտեսուհու մոտ փակ վիճակում:

⁹⁰ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 134-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁹¹ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 134-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

Եզրահանգում/Նշում.

ՀՀ կառավարությունը ի պատասխան ԽԿԿ առաջարկների նշել է, որ նախատեսվում է կլինիկայում կատարել վերանորոգման աշխատանքներ և բարելավել հիվանդների կենցաղային պայմանները՝ համապատասխան ֆինանսավորման դեպքում: Մինչդեռ, ՀՀ առողջապահության նախարարությունն ի պատասխան ՌԴԿ հարցմանը նշել է, որ Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայում ներկայիս պայմաններում հնարավոր չէ կատարել կապիտալ վերանորոգման աշխատանքներ. մասնավորապես հարկադիր բուժման հիվանդների համար ստեղծել անհատական միջավայր: Այսպիսով, ՀՀ առողջապահության նախարարությունը չի կատարել ԽԿԿ-ի կողմից առաջարկվող գործողությունները, սակայն ի պատասխան ԽԿԿ-ի զեկույցի նշել է, որ նախատեսվում են որոշակի աշխատանքներ, որը ուղղակի անկեղծ պատասխան չի կարող համարվել, քանի որ մի դեպքում նշվում է, որ նախատեսվում է կատարել որոշակի աշխատանքներ, իսկ մյուս դեպքում նշվում է, որ ներկայիս պայմաններում դա հնարավոր չէ:

6.5. ՀՀ պաշտպանության նախարարության վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.

Կոմիտեի առաջարկության տեքստը.

Կոմիտեն առաջարկում է.

- ✚ Լուծել Երևանի Ռազմական ոստիկանության կարգապահական մեկուսարանների և Սևանի Ռազմական ոստիկանության խցերի գերծանրաբեռնվածության հարցը:
- ✚ Սևանի Ռազմական ոստիկանության 4մ² չափ ունեցող խցերը կամ մեծացնել կամ գործածությունից դուրս հանել:
- ✚ Բոլոր ձեռքակալված ծառայողներին տրամադրել նեքնակներ, վերմակներ և բարձեր:
- ✚ Բարելավել Երևանի Ռազմական ոստիկանության կարգապահական մեկուսարանների պայմանները⁹²:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Երևանի կայազորի կարգապահական մեկուսարանի խցերի վատ վիճակը, սանհանգույցների կեղտոտ և քայքայվելու հանգամանքը վերացված է, քանի որ դրանք դեռևս 24.01.2007թ. հիմնովին վերանորոգվել են: Խցերի չափերի բարեփոխումները պայմանավորված են ներկայումս ընթացող օրենսդրական փոփոխություններով: Այնուամենայնիվ, ՌՌ անձնակազմը կարգապահական մեկուսարանների խցերում պահվող յուրաքանչյուր զինծառայողի համար աշխատում է ապահովել նվազագույնը չորս քմ կեցության տարածք՝ խցերում տեղադրված տախտակամածների քանակից թվով քիչ զինծառայողներ պահելով: Օրենսդրական բարեփոխումներով է պայմանավորված նաև կարգապահական մեկուսարաններում պահվող զինծառայողների պայմանների բարելավման հարցերը: Մասնավորապես, կարգապահական մեկուսացման մեջ գտնվող ազատազրկվածներին գիշերվա համար ներքնակներով և բարձերով ապահովելն ու խցերում օրվա ընթացքում պատերին գամված մահճակալներից օգտվելն արգելված է գործող օրենսդրությամբ:

ՀՀ ԶՈՒ կայազորային և պահակային կանոնադրքով նախատեսված չէ կալանավորված կամ պատիժը կրող զինվորական անձնակազմին որևէ արտախցային գործունեությամբ ապահովելը: ՀՀ պաշտպանության նախարարությունը օրենսդրական փոփոխությունների ընթացքում հաշվի կառնի կոմիտեի առաջարկությունները⁹³:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

1. ՀՀ Ռազմական ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում նախատեսվում էր իրականացնել խցերի չափերի բարեփոխումներ: Իրականացվել են արդյո՞ք նշված բարեփոխումները, եթե այո՝ խնդրում են, տրամադրել մանրամասն տեղակատվություն նշված խնդիրների

⁹² ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 55-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁹³ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 55-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

լուծման նպատակով ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

2. ՀՀ Ռազմական ոստիկանությունում նախատեսվում էր լուծել կարգապահական մեկուսարաններում պահվող զինծառայողների պայմանների բարելավման հարցերը: Օրինակ՝ կարգապահական մեկուսացման մեջ գտնվող ազատազրկվածներին խցերում զիջերվա համար ներքնակներով և բարձերով ապահովելու և օրվա ընթացքում պատերին գամված մահճակալներից օգտվելու հնարավորություն տալը: Արդյո՞ք ձեռնարկվել են միջոցառումներ նշված խնդիրների լուծման ուղղությամբ, եթե այո խնդրում են տրամադրել մանրամասն տեղեկատվություն ձեռնարկված քայլերի վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

1. Իրականացվել է ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության համակարգի կարգապահական մեկուսարանների (Իջևան, Վանաձոր, Գյումրի, Մարտունի, Երևան, Վայք, Կապան, Ստեփանակերտ, Ճամբարակ) հիմնանորոգման և նորերի կառուցման աշխատանքները: Բարեփոխվել են խցերի չափերը, իսկ դրանք կահավորվել են կանոնադրությամբ սահմանված կարգով: Այսպես, մեկ ծառայողի համար խցի չափը կազմում է 4քմ, խցերում առկա են անշարժ սեղան, զինվորական աթոռակ, ծալովի տախտակամած, զինվորական պահարանիկ, պատին ամրացված է տակդիր՝ բաժակով և ջրի բաքով:
2. ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի նախագիծը, որում կարգապահական տույժի կարգով կարգապահական մեկուսացումը հանվել է և զինծառայողներին այլևս նման տույժ չի տրվելու: Այդ առումով համապատասխան փոփոխություններ են կատարվելու նաև ՀՀ ԶՈՒ կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագրքի 14-րդ հավելվածում: Նշված օրինագծերը նախատեսվում են ընդունել ՀՀ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանից երևում է, որ ԽԿԿ-ի կողմից արված առաջարկությունների ուղղությամբ կատարվել են կոնկրետ քայլեր, որոնք միտված են ռազմական ոստիկանության համակարգի կարգապահական մեկուսարաններում պահվող անձանց պահման պայմանների վիճակի բարելավմանը, ինչպես նաև զինծառայողների կարգապահական մեկուսացումը որպես տույժ հանվելու ուղղությամբ:

6.6. ՀՀ արդարադատության նախարարության վերաբերյալ ներկայացված առաջարկություններն ու դրանց կատարման ընթացքը.

Կոմիտեի առաջարկության տեքստը.

1. Կրկնապատկել ջանքերն ուղղված քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածության խնդրի լուծմանը⁹⁴:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման և շենքային պայմանների հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվել և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ: 2001 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած քրեակատարողական համակարգի բարեփոխումների ծրագրով նախատեսվում էր բարեփոխումների իրականացում մի քանի ուղղություններով: Բնական է, որ այդ բարեփոխումներն առաջին հերթին պետք է վերաբերեին ծառայության կարգավիճակի օրենսդրական սահմանմանը: Հենց այս իմաստով էլ՝ 2003 թվականին ընդունվեց «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, իսկ 2005 թվականին ընդունվեց հիշատակված օրենքի բարեփոխված տարբերակը: Քրեակատարողական ծառայության գործունեությունը պատշաճ կերպով ապահովելու համար ցայսօր ընդունվել են բազմաթիվ իրավական ակտեր: Բացի իրավական ապահովումից, բարեփոխումների ծրագիրը նախատեսում էր գործնական և ենթակառուցվածքային միջոցառումներ: Վերջինս ենթադրում էր քրեակատարողական ծառայության, մասնավորապես ՔԿՀ-ների նյութական բազայի համապատասխանեցում թե՛ նոր կենսական պայմաններին, և թե՛ միջազգային չափանիշներին: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է քրեակատարողական հին և ոչ օպտիմալ օգտագործելի հիմնարկների գործունեության դադարեցում, առկա շինությունների վերափոխում և միջազգային չափանիշներին համապատասխանեցում, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող նոր ՔԿՀ-ների կառուցում: Բնական է, որ հիմնարկների՝ խորհրդային ժամանակներից ժառանգություն ստացած արդեն իսկ բարոյապես և ֆիզիկապես մաշված շենք-շինություններն իրենց վիճակով անբավարար են մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան պատժի կատարման համար: Քրեակատարողական ծառայության բարեփոխումների ծրագրի սկզբնական փուլում՝ 2001-2006 թթ., վերանորոգվել են քրեակատարողական չորս հիմնարկներ՝ համակարգի առջև ծառացած խնդիրների ժամանակավոր լուծման համար: Իհարկե, պետք է փաստել, որ նույնիսկ վերանորոգված հիմնարկների պայմաններում չենք կարող խոսել համակարգի ենթակառուցվածքների՝ եվրոպական չափանիշներին լիարժեք համապատասխանելու մասին: Այլ կերպ ասած, մինչ այժմ կատարված բարեփոխումների արդյունքում վերանորոգված ՔԿՀ-ները կարող են համարվել միայն անցողիկ փուլ ապահովող⁹⁵:

⁹⁴ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 61-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁹⁵ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 61-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

ՀՀ քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման և շենքային պայմանների խնդիրների լուծման ուղղությամբ ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվում: Խնդրում եմ, տրամադրել մասնրամասն տեղեկատվություն ձեռնարկվող քայլերի վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների հետ կապված խնդիրների լուծման նպատակով, ուսումնասիրելով այլ երկրների փորձը՝ ներկայիս միջազգային չափորոշիչների համապատասխան բանտեր ունենալու գործում, կատարվել է հետևություն, որ նմանատիպ բանտեր կարելի է ունենալ ոչ թե արդեն իսկ առկա անհամապատասխան բանտերը չափորոշիչներին համապատասխանեցնելով, այլ կառուցելով եվրոպական չափորոշիչներին համապատասխան բանտեր:

Քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրով նախատեսվում է առաջիկա 10 տարիների ընթացքում որոշ քրեակատարողական հիմնարկների փոխարեն (այդ թվում նաև «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի) նոր և միջազգային չափորոշիչներին համապատասխան քրեակատարողական հիմնարկների կառուցում և անբավարար շենքային պայմաններ ունեցող քրեակատարողական հիմնարկների գործունեության դադարեցում:

Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվել և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ: ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած քրեակատարողական համակարգի բարեփոխումների ծրագրով նախատեսվում են բարեփոխումների իրականացում մի քանի ուղղություններով: Քրեակատարողական ծառայության գործունեությունը պատշաճ կերպով ապահովելու համար ընդունվել են բազմաթիվ իրավական ակտեր: Բացի իրավական ապահովումից, բարեփոխումների ծրագիրը նախատեսում է գործնական և ենթակառուցվածքային միջոցառումներ: Վերջինս ենթադրում է քրեակատարողական ծառայության, մասնավորապես քրեակատարողական հիմնարկների նյութական բազայի համապատասխանեցում թե՛ նոր կենսական պայմաններին և թե՛ միջազգային չափորոշիչներին: Այլ կերպ ասած, մինչ այժմ կատարված բարեփոխումների արդյունքում քրեակատարողական հիմնարկների վերանորոգումները կարելի է համարել անցողիկ փուլ: Այդ պատճառով, քրեակատարողական նոր հիմնարկների կառուցումն անհրաժեշտություն է:

Այսպիսով, քրեակատարողական ծառայության՝ օրենքով նախատեսված խնդիրների կատարումը լիարժեք և պատշաճ ապահովելու նպատակով, նախատեսվում է առաջիկա 10 տարիների ընթացքում շահագործման հանձնել չորս նոր քրեակատարողական հիմնարկներ և կապիտալ վերանորոգել ևս չորսը:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգում նախատեսված է.

Կապիտալ շինարարություն

-  Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման

շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են (նախատեսված է 1200 դատապարտյալի համար)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի թիվ 831-Ն որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն;

- ✚ Ֆինանսավորման դեպքում կիրականացվի ՀՀ Ան «Գորիս» նոր քրեակատարողական հիմնարկի շինարարական աշխատանքները (նախատեսված 320 դատապարտյալների համար, նախագծանախահաշիվային աշխատանքները ավարտված են),
- ✚ Նախատեսված է կառուցել նոր «Երևան» (անվանումը պայմանական, 1800 դատապարտյալների համար) և «Սևան» (1200 դատապարտյալի համար) քրեակատարողական հիմնարկներ, նոր մասնաշենք Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում (նախատեսված 250 դատապարտյալի համար),

Վերանորոգման աշխատանքներ

- ✚ Նախատեսվում են իրականացնել վերանորոգման աշխատանքներ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Աբովյան», «Սևան» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում: Հայաստանի Հանրապետության կառավարության 02.06.2011թ N 831-Ն որոշման համաձայն ՀՀ առողջապահության նախարարության Բ. Ֆանարջյան 76 հասցեում գտնվող «Ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հողատարածքի և գույքի՝ ՀՀ արդարադատության նախարարությանը ամրացվելուց հետո այդտեղ իրականացվելու են վերանորոգման աշխատանքներ՝ քրեակատարողական հիմնարկի չափորոշիչներին հարմարեցնելու համար:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների հետ կապված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում են վերանորոգման և կապիտալ շինարարության աշխատանքներ, որոնք բնականաբար ողջունելի են, սակայն ներկայումս ահագնացող գերբնակեցման խնդրի լուծման ուղղությամբ դեռևս ակտիվ քայլեր չեն կատարվել, օրինակ պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի բարեփոխման ուղղությամբ:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

2. Կոմիտեն առաջարկում է Հայաստանի իշխանություններին ձեռքարկված անձանց և դատապարտյալների զբաղվածության համար մշակել հատուկ ծրագիր⁹⁶:

⁹⁶ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 62-րդ կետ, CPT /Inf (2011)25

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Կալանավորված անձանց և դատապարտյալների զբաղվածության առումով հարկ է նշել, որ սույն թվականի հունվար ամսին «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամին արդեն ներկայացվել է դատապարտյալների մասնագիտական հմտությունների անվանացանկ, որոնք ուղղված են ըստ արհեստագործական ունակությունների դատապարտյալներին աշխատանքի ներգրավելուն: Այդ աշխատանքներում կներգրավվեն ինչպես դատապարտյալները, այնպես էլ կալանավորված անձինք: Բացի այդ, 2011թ. ապրիլի 6-ին «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում բացվել է արտադրական նոր մասնաշենք, որն ունի հրուշակեղենի և հացամթերքի արտադրամասեր, այդ աշխատանքներում ներգրավվելու են տասնյակից ավել կալանավորված անձինք և դատապարտյալներ, ինչը որոշակի առումով կլուծի այդ հիմնարկում զբաղվածության խնդիրը, նախատեսվում է առաջիկայում ընդլայնել նշված արտադրության ծավալները՝ բացելով նոր արտադրամասեր: Այժմ նախագծման փուլում է գտնվում լամպերի արտադրամասի իրականացման ծրագիրը, որում ներգրավված կլինեն մոտ 2 տասնյակ դատապարտյալներ և կալանավորված անձինք: ՀՀ քրեակատարողական ծառայությունը «Աջակցություն դատապարտյալին հիմնադրամի» հետ համագործակցությամբ մշտապես փնտրում է արդյունավետ եղանակներ դատապարտյալների և կալանավորված անձանց զբաղվածության ապահովման ուղղությամբ⁹⁷:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների զբաղվածության առումով նախատեսվում էր ըստ արհեստագործական ունակությունների դատապարտյալներին աշխատանքի ներգրավել: Բացի այդ, նախատեսվում էր «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում բացել արտադրական նոր մասնաշենք, որի աշխատանքներում ներգրավվելու էին տասնյակից ավելի կալանավորված անձինք և դատապարտյալներ: Արդյո՞ք իրագործվել են նշված միջոցառումները, և ի՞նչ այլ քայլեր են ձեռնարկվել դատապարտյալների և կալանավորված անձանց զբաղվածության ապահովման ուղղությամբ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Դատապարտյալների օգտակար զբաղվածությունը մշտապես համակարգի կարևոր խնդիրներից է, որի ուղղությամբ քայլեր են ձեռնարկվում: Մասնավորապես, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում վերագործարկվել է հացաթխման արտադրամասը, գործում են քարի և գորգագործության արտադրամասերը, իսկ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում գործարկվել է մակարոնի արտադրության արտադրամասը:

⁹⁷ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 62-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ դատապարտյալների օգտակար զբաղվածությունը մշտապես համակարգի ուշադրության կենտրոնում է, որոշ քայլեր կատարվել են դատապարտյալների զբաղվածության ապահովման նպատակով, սակայն ձեռնարկվող քայլերը բավարար չեն, որ քրեակատարողական համակարգում պահվող դատապարտյալների հիմնական մասի զբաղվածության հարցը լուծվի:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

3. Կոմիտեն առաջարկում է իշխանություններին քայլեր ձեռնարկել քրեակատարողական հիմնարկներում կաշառակերության դեպքերի դեմ պայքարի առնչությամբ: Այնուհետև քրեակատարողական հիմնարկների անձնակազմին պետք է զգուշացվի, որ բանտարկյալներից կամ նրանց բարեկամներից կաշառք պահանջելը անընդունելի է⁹⁸:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

ՀՀ քրեակատարողական ծառայությունում առկա կոռուպցիոն ռիսկերը կրճատելու ուղղությամբ ՀՀ «Իրավաբանական ինտիտուտում» պարբերաբար իրականացվում են վերապատրաստման և ուսուցման դասընթացներ քրեակատարողական ծառայողների համար, որոնք նպատակ ունեն կատարելագործել նրանց գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև աջակցել նրանց իրավագիտակցության բարձրացմանը: Կոռուպցիայի կրճատման ուղղությամբ միջոցառումներ են նախատեսված նաև «Քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրում»: «2009-2012թ.թ. Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային ծրագրում» ևս նախատեսված են մի շարք միջոցառումներ քրեակատարողական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ: Վերջին երեք տարիների ընթացքում արձանագրվել է քրեակատարողական ծառայությունում կաշառք վերցնելու երկու դեպք, որոնցով հարուցվել են քրեական գործեր, և անձինք ենթարկվել են քրեական պատասխանատվության, և հեռացվել են համակարգից⁹⁹:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Նախատեսվում էր քրեակատարողական հիմնարկներում կոռուպցիոն ռիսկերի կրճատման ծրագրի մշակում, ուսուցման և վերապատրաստման դասընթացների իրականացում քրեակատարողական հիմնարկների ծառայողների համար: Արդյո՞ք իրականացվել են նշված միջոցառումները և ի՞նչ քայլեր են ձեռնարկվել կոռուպցիոն ռիսկերի կրճատմանն ուղղված, որոնք CPT զեկույցի պատասխանում նշված չի եղել:

Պատասխանի համառոտ տեքստը.

2011 թվականի ընթացքում վերապատրաստվել են 735 քրեակատարողական

⁹⁸ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 63-րդ կետ, CPT /Inf (2011)25

⁹⁹ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 63-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

ծառայողներ: Վերապատրաստման ծրագրով քրեակատարողական ծառայողների համար նախատեսված են եղել նաև կոռուպցիայի դեմ պայքարի և հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ թեմաներ:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ քրեակատարողական հիմնարկներում առկա կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ ԽԿԿ-ի առաջարկությունները անհետևանք չեն մնացել և ձեռնարկված քայլերի արդյունքում 735 քրեակատարողական ծառայողներ վերապատրաստվել են կոռուպցիայի դեմ պայքարի և հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

4. Կոմիտեն առաջարկում է, որ Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի անձնակազմին զգուշացվի, որ բանտարկյալների նկատմամբ դաժան վերաբերմունքն անթույլատրելի է և ենթակա է խիստ պատժի¹⁰⁰:
5. Կոմիտեն առաջարկում է Հայաստանի իշխանություններին մշակել ազգային ռազմավարություն ուղղված բանտարկյալների միջև եղած ճնշումներին, ինչպես նաև դատապարտյալների միջև աստիճանակարգված հարաբերությունների բացառմանը¹⁰¹:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Քրեակատարողական ծառայողի օրինական պահանջները չկատարելու կամ պարտականությունների կատարմանը խոչնդոտելու դեպքերում քրեակատարողական ծառայողն իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք:

Զեկույցում նշված այն դիտարկման կապակցությամբ, ըստ որի ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ազատազրկման դատապարտված դատապարտյալներից ոմանք ենթարկվել են մահակներով ծեծի, պետք է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող որևէ անձ ծեծի չի ենթարկվում: «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն քրեակատարողական հիմնարկում գտնվող անձի կողմից քրեակատարողական ծառայողի օրինական պահանջները չկատարելու կամ պարտականությունների կատարմանը խոչնդոտելու դեպքում քրեակատարողական ծառայողն իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ: Ֆիզիկական ուժ և հատուկ միջոցների կիրառման յուրաքանչյուր դեպքում կազմվում է արձանագրություն, անհրաժեշտության դեպքում ցուցաբերվում է բժշկական օգնություն, ինչի մասին սահմանված կարգով իրազեկվում է հսկողություն իրականացնող համապատասխան մարմիններին¹⁰²:

¹⁰⁰ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 64-րդ կետ, CPT /Inf (2011)25

¹⁰¹ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 65-րդ կետ, CPT /Inf (2011)25

¹⁰² ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 64-րդ և 65-րդ կետերի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Նախատեսվում էր ձեռնարկել համապատասխան միջոցառումներ կապված քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների նկատմամբ դաժան վերաբերմունքի դեպքերի, ինչպես նաև դատապարտյալների միջև աստիճանակարգված հարաբերությունների բացառման հետ: Արդյո՞ք իրականացվել են նշված բոլոր միջոցառումները և ինչ՞ քայլեր են ձեռնարկվել: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Հայաստանի Հանրապետության ՔՀԿ-ներում 2011 թվականի ընթացքում դատապարտյալների նկատմամբ դաժան վերաբերմունքի դեպքեր չեն արձանագրվել:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ այն լիարժեքորեն չի պատասխանում առաջադրված հարցին թե, ինչ՞ քայլեր են ձեռնարկվել դատապարտյալների միջև աստիճանակարգված հարաբերությունների բացառման հետ: Այսպիսով, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունն արձանագրում է, որ 2011 թվականի ընթացքում դաժան վերաբերմունքի դեպքեր չեն արձանագրվել, սակայն դատապարտյալների միջև աստիճանակարգված հարաբերությունների բացառման ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

6. Կոմիտեն Հայաստանի իշխանություններին առաջարկում է Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում ցմահ դատապարտյալներին ձեռնաշղթաներով խցերից հանելու պրակտիկան կիրառել միայն անհատական ռիսկային դեպքերում¹⁰³:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Ցմահ ազատազրկման դատապարտվածները դատապարտվում են առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու համար և որպես կանոն ունեն ռիսկայնության բարձր աստիճան, նրանց ռիսկի գնահատումը յուրաքանչյուր դեպքում կատարվում է առանձնացված, սակայն որոշակի գնահատական ստանալու համար անհրաժեշտ է բավարար ժամանակ, որի ընթացքում կհաստատվի տվյալ դատապարտյալի առավել ցածր ռիսկայնության աստիճանը: Տեխնիկապես առավել հազեցված հիմնարկներ ունենալու դեպքում, երբ զգալիորեն կկրճատվի դատապարտյալի փախուստի կամ այլ հակաօրինական քայլեր կատարելու հավանականությունը, առավել լայն հնարավորություններ կստեղծվեն առանց ձեռնաշղթաների դատապարտյալներին խցերից դուրս բերելու համար: Դատապարտյալներին ձեռնաշղթաներով խցերից հանելու պրակտիկան պայմանավորված է նաև հենց իրենց անվտանգությամբ¹⁰⁴:

¹⁰³ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 72-րդ կետ, CPT /Inf (2011)25

¹⁰⁴ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 72-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Արդյո՞ք ցմահ դատապարտյալներին ձեռնաշղթաներով խցերից հանելու պրակտիկան կիրառվում է միայն ռիսկային դեպքերում, իսկ եթե դա կրում է համատարած բնույթ խնդրում եմ տրամադրել հիմնավորումներ նշված պրակտիկայի կիրառության վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Քրեակատարողական ծառայողների և այլ անձանց անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով՝ առանձին դեպքերում ցմահ ազատազրկման դատապարտյալների ռիսկայնության աստիճանի բարձր լինելու պատճառով նրանց տեղաշարժը կատարվում է հատուկ միջոցների կիրառմամբ:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ ցմահ ազատազրկման դատապարտյալների ռիսկայնության աստիճանի բարձր լինելու պատճառով նրանց տեղաշարժը կատարվում է հատուկ միջոցների կիրառմամբ, որից կարելի է ենթադրել, որ ցմահ դատապարտյալներին ձեռնաշղթաներով խցերից հանելու պրակտիկան համատարած բնույթ է կրում: Տվյալ պարագայում, Կոմիտեի առաջարկությունը կապված՝ ցմահ դատապարտյալներին ձեռնաշղթաներով խցերից հանելու պրակտիկան միայն անհատական ռիսկային դեպքերում կիրառելու հետ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից չի ընդունվել:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

7. Կոմիտեն առաջարկում է Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում լուծել հետևյալ խնդիրները՝
- ✚ Խցերի գերբնակեցվածության, վատ վիճակի հետ կապված խնդրի դեմ համապատասխան միջոցներ կիրառել:
 - ✚ յուրաքանչյուր բանտարկյալի ապահովել մահճակալով,
 - ✚ բացառել էլեկտրականության անջատումները,
 - ✚ վերանորոգել լոգարանները և ապահովել համապատասխան գույքով,
 - ✚ լոգանքի ընդունումը սահմանել ամենաքիչը շաբաթը մեկ անգամ,
 - ✚ դատապարտյալներին տրամադրել բացօթյա զբոսանք ամեն օր, այդ թվում նաև շաբաթ և կիրակի օրերին,
 - ✚ խցից դուրս կանոնակարգված միջոցառումների ծրագիր (օր. աշխատանք, կրթություն, սպորտ) մշակել բոլոր դատապարտյալների համար,
 - ✚ հատուկ ուշադրություն դարձնել խցերի սանիտարահիգիենիկ պայմաններին, այդ կառույցների ծավալներին, նվազագույն մակերեսի ապահովմանը, լուսավորությանը, ջրամատակարարմանը, բավարար ջերմության ապահովմանը և օդափոխմանը¹⁰⁵:

¹⁰⁵ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 83-րդ կետ, CPT /Inf (2011)25

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Նշված կարճաժամկետ նպատակների հետ կապված խնդիրները ընդունելի են դրանց մի մասի պատասխանները ներկայացվեցին նախորդող կետերում: Ինչ վերաբերվում է միջնաժամկետ նպատակներին, ապա դրանց լուծումները նախատեսվում է տալ «Քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրի» իրականացմամբ¹⁰⁶:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում նախատեսվում էր լուծել հետևյալ խնդիրները՝

-  խցերի գերբնակեցվածության, վատ վիճակի հետ կապված խնդրի դեմ համապատասխան միջոցներ կիրառել,
-  յուրաքանչյուր բանտարկյալի ապահովել մահճակալով,
-  բացառել էլեկտրականության անջատումները,
-  վերանորոգել լոգարանները և ապահովել համապատասխան գույքով,
-  լոգանքի ընդունումը սահմանել ամենաքիչը շաբաթը մեկ անգամ,
-  դատապարտյալներին տրամադրել բացօթյա զբոսանք ամեն օր, այդ թվում նաև շաբաթ և կիրակի օրերին,
-  խցից դուրս կանոնակարգված միջոցառումների ծրագիր (օր. աշխատանք, կրթություն, սպորտ) մշակել բոլոր դատապարտյալների համար,
-  հատուկ ուշադրություն դարձնել խցերի սանիտարահիգիենիկ պայմաններին, այդ կառույցների ծավալներին, նվազագույն մակերեսի ապահովմանը, լուսավորությանը, ջրամատակարարմանը, բավարար ջերմության ապահովմանը և օդափոխմանը.
-  Արդյո՞ք լուծվել են վերը նշված խնդիրները: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Նոր քրեակատարողական հիմնարկների կառուցմամբ ամբողջությամբ կլուծվի գերբնակեցվածության խնդիրը: Լոգարաններն ապահովված են կախիչներով, պահարաններով և նստարաններով: Լոգանքը տրամադրվում է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կառնոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543 որոշման 47-րդ կետի համաձայն՝ առնվազն շաբաթը մեկ անգամ: Ինչպես «Նուբարաշեն», այնպես էլ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության բոլոր

¹⁰⁶ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 83-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվում է բացօթյա զբոսանք, որի տևողությունը օրական մեկ ժամից պակաս չի լինում:

Էլեկտրամատակարարումն իրականացվում է շուրջօրյա և էլեկտրական անջատումները բացառված են: Խցերում սանիտարահիգիենիկ պայմանները գտնվում են բավարար վիճակում, իսկ լուսավորությունը և ջրամատակարարումը ապահովված են: Ջեռուցումն իրականացվում է էլեկտրական սալիկների միջոցով:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ այն չի պատասխանում առաջադրված բոլոր հարցերին, ինչ վերաբերում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում առկա խնդիրներին, ապա դրանց լուծման մեծ մասը, այդ թվում գերբնակեցման խնդրի լուծումը կապվում է նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման հետ:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

8. Կոմիտեն Հայաստանի իշխանություններին առաջարկում է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ կապված օտարերկրյա դատապարտյալների գործունեության ծրագրերի և օտարալեզու գրականության բացը լրացնելու հետ¹⁰⁷:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Օտարերկրյա դատապարտյալների գործունեության ծրագրերի, օտարալեզու գրականության բացակայության, օտարերկրյա դատապարտյալների համար հասկանալի լեզուներով ընթերցանության նյութեր ապահովելու նպատակով նախատեսվում է 2011 թվականի մայիս ամսից պարբերաբար համագործակցել դեսպանատների հետ՝ նրանց միջոցով օտարերկրյա գրականություն ստանալու և «Նուբարաշեն», «Վարդաշեն» ՔԿՀ-ին հանձնելու համար: Օտարերկրացի դատապարտյալների ըստ խցերի տեղաբաշխման ընթացքում հնարավորինս հաշվի է առնվում միջանձնային հաղորդակցման հնարավորությունները, մշակութային յուրահատկությունները, ինչպես նաև նրանց ազգությունը, այն առումով, որ միևնույն ազգի ներկայացուցիչները հնարավորինս տեղաբաշխվում են նույն խցերում: ՀՀ քրեակատարողական ծառայության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումը հատուկ ուշադրություն է դարձնում օտարերկրացի ազատագրվածների հետ տարվող աշխատանքներին¹⁰⁸:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Արդյո՞ք լուծվել է օտարերկրյա դատապարտյալների խցերի գերծանրաբեռնվածության խնդիրը և արդյո՞ք ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ կապված

¹⁰⁷ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 78-րդ կետ, CPT /Inf (2011)25

¹⁰⁸ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 78-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

օտարերկրյա դատապարտյալների գործունեության ծրագրերի և օտարալեզու գրականության բացը լրացնելու ուղղությամբ: Խնդրում են տրամադրել մանրամասն տեղեկատվություն ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Օտարերկրյա դատապարտյալների գործունեության ծրագրերի ուղղությամբ մշակվել է մարզական միջոցառումների ծրագիր: Բացի այդ դեսպանատներին ներկայացվել է օտարերկրյա գրականության ձեռք բերման հարցում աջակցելու հարցը, որը դեռևս ընթացքի մեջ է:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ այն չի պատասխանում օտարերկրյա դատապարտյալների խցերի գերձանրաբեռնվածության խնդրին, ինչ վերաբերում է օտարերկրյա դատապարտյալների գործունեության ծրագրերի և օտարալեզու գրականության բացը լրացնելուն, ապա նշված ուղղությամբ ձեռնարկվող քայլերը ընթացքի մեջ են, այսինքն օտարերկրյա դատապարտյալներին վերաբերող խնդիրները լուծված չեն:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

9. Կոմիտեն առաջարկում է Հայաստանի իշխանություններին քայլեր ձեռնարկել «Կոշ» քրեակատարողական հիմնարկում հոմոսեքսուալ բանտարկյալների մեկուսացման դեպքերի բացառման ուղղությամբ, ինչպես նաև նրանց խցերի վատթար վիճակի բարելավման հետ կապված¹⁰⁹:
10. Կոմիտեն առաջարկում է իրականացնել «Կոշ» քրեակատարողական հիմնարկի լոգարանների և սանհանգույցների վերանորոգում և վերակահավորում, լոգանք ընդունելու հաճախականության ավելացում: Կոմիտեն առաջարկում է լուծել կաթացող տանիքների, չջեռուցվող խցերի և խցերի գերբնակեցման խնդիրները¹¹⁰:
11. Կոմիտեն առաջարկում է Կոշ քրեակատարողական հիմնարկում մշակել բանտարկյալների զբաղվածության հատուկ ծրագիր, մասնավորապես ընդգրկել կրթական դասընթացներ և աշխատանքային հնարավորությունները մեծացնել: Այնուհետև հանգստի և սպորտի համար համապատասխան միջոցառումներ ձեռնարկել¹¹¹:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

7. Ոչ միայն հոմոսեքսուալ այլ ընդհանրապես բոլոր ազատազրկվածների աշխատանքի անցնելը իրականացվում է բացառապես նրանց դիմումի հիման վրա: Աշխատանքում ներգրավված բոլոր դատապարտյալներն ունեն հանգստյան օրեր: Հոմոսեքսուալ ազատազրկվածների նկատմամբ այլ դատապարտյալների որոշակի բացասական

¹⁰⁹ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 92-րդ կետ, CPT /Inf (2011)25

¹¹⁰ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 90-րդ կետ, CPT /Inf (2011)25

¹¹¹ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 91-րդ կետ, CPT /Inf (2011)25

վերաբերմունքն իրոք առկա է քրեակատարողական հիմնարկներում, այդ վերաբերմունքը ունի անցյալից եկող արմատներ, որի վերացման համար անհրաժեշտ է մենթալիտետի որոշակի փոփոխություն և բնականաբար որոշակի ժամանակ: Քրեակատարողական հիմնարկների ղեկավարության կողմից ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները խտրական ցանկացած վերաբերմունք նրանց նկատմամբ բացառելու ուղղությամբ:

8. «Կոշ» քրեակատարողական հիմնարկում առկա թերությունների հաղթահարումը ևս նախատեսվում է ՀՀ քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրով, որի կապակցությամբ մեկնաբանությունները տրվել են նախորդ կետերում: «Կոշ» քրեակատարողական հիմնարկում սննդի որակի հետ կապված խնդիրը կքննարկվի ՀՀ քրեակատարողական ծառայության ղեկավարության կողմից և կառնվի հատուկ ուշադրության տակ: «Կոշ» քրեակատարողական հիմնարկում բաղնիքները հիմնովին վերանորոգվել են:

9. Ջեկույցում նշված դիտարկումը քրեակատարողական հիմնարկների կրթական ծրագրերի, ոչ բավարար քանակությամբ հեռուստացույցների առկայության, աղքատիկ գրադարանի, դատապարտյալների աշխատելու հնարավորության, սպորտային խաղերի և ժամանցի ծրագրերի բացակայության վերաբերյալ, հարկ է նշել, որ սույն թվականի հունվար ամսին «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամին արդեն ներկայացվել է դատապարտյալների մասնագիտական հմտությունների անվանացանկ, որոնք ուղղված են ըստ արհեստագործական ունակությունների դատապարտյալներին աշխատանքի ներգրավելուն: Տարվա ընթացքում նախատեսվում է մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում, մասնավորապես՝ թենիսի, ֆուտբոլի առաջնությունների, ինտելեկտուալ խաղ մրցույթի կազմակերպում, գրադարանների համալրում¹¹²:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Արդյո՞ք ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ կապված հոմոսեքսուալ բանտարկյալների մեկուսացման դեպքերի բացառման, ինչպես նաև նրանց խցերի վատթար վիճակի բարելավման հետ: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Նախատեսվում էր լուծել ցմահ դատապարտյալների զբաղվածության, բացօթյա վարժությունների կատարման սահմանափակման և կրթության հնարավորությունների սակավության խնդիրները: Արդյո՞ք կազմվել է հատուկ ծրագիր ուղղված տվյալ խնդիրների լուծմանը և նշված խնդիրների լուծմանն ուղղված ի՞նչ այլ միջոցառումներ են իրականացվել:

«Կոշ» քրեակատարողական հիմնարկում նախատեսվում էր լուծել հետևյալ խնդիրները՝

 կաթացող տանիքների, չջեռուցվող խցերի և խցերի գերբնակեցումը,

¹¹² ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 90-92-րդ կետերի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

- ✚ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի լոգարանների և սանհանգույցների վերանորոգում և վերակահավորումը, լոգանք ընդունելու հաճախականության ավելացումը,
- ✚ ուտելիքի որակի բարելավումը,
- ✚ հոմոսեքսուալ դատապարտյալների նկատմամբ խտրական վերաբերմունքի առկայությունը, նրանց խցերի վատթար վիճակի վերացումը և վերանորոգումը,
- ✚ կրթական ծրագրերի սակավությունը, ոչ բավարար քանակությամբ հեռուստացույցների առկայությունը, աղքատիկ գրադարանը, սպորտային խաղերի և ժամանցի ծրագրերի բացակայությունը.

Արդյո՞ք լուծվել են վերը նշված խնդիրները: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

- ✚ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բոլոր կալանավորված անձանց և դատապարտյալների համար նախատեսված են հավասար պայմաններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ կալանավորված անձանց և դատապարտյալներին անջատ պահելու պայմանների պահպանմամբ: Համաձայն «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543 որոշման 36-րդ կետի՝ յուրաքանչյուր կալանավորված անձ կամ դատապարտյալ պատասխանատու է իր բնակելի խցի կամ կացարանի մաքրության պահպանման համար, որի համար նրան քրեակատարողական հիմնարկի վարչակազմն ապահովում է համապատասխան միջոցներով, այդ թվում հիմնական մաքրող միջոցներով և նյութերով:
- ✚ Ցմահի դատապարտյալների օգտակար զբաղվածության սահմանափակումները օբյեկտիվորեն գալիս են ՔԿ հիմնարկի շենքային պայմաններից: Նրանք օգտվում են և՛ բացօթյա վարժությունների կատարման իրավունքից և՛ կրթության իրավունքից: Հատուկ ծրագիր կմշակվի նոր շենքի առկայության դեպքում, որի տարածքային և տեխնիկական հագեցվածությունը հնարավորություն կտա ընդլայնել գործունեության սահմանները:
- ✚ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի կացարանների տանիքները վերանորոգվել են: Ջեռուցումը հանրակացարաններում իրականացվում է էլեկտրական ջեռոցներով, լոգարանները ամբողջությամբ վերանորոգվել և կահավորվել են, 2007 թվականին կապիտալ կառուցվել է նոր սանհանգույց և լվացարան: Լոգանքը տրամադրվում է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածին պահելու վայրերի և

ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543 որոշման 47-րդ կետի համաձայն՝ առնվազն շաբաթը մեկ անգամ: Մենդի որակը և չափաբաժինները համապատասխանում են ՀՀ կառավարության մոդմից սահմանված նորմատիվներին: Համասեռամուղ դատապարտյալների նկատմամբ Հայաստանի Հանրապետության «Կոշ» քրեակատարողական հիմնարկում խտրական վերաբերմունքի դեպքեր չեն արձանգործվել, ներկայումս նշված դատապարտյալները իրենց դիմումի համաձայն բնակեցված են մյուս դատապարտյալների հետ միասին, օգտվում են նույն ճաշարանից, բաղնիքից և կոմունալ-կենցաղային այլ ծառայություններից, որն է տարբերակված մոտեցում չկա նրանց և այլ դատապարտյալների միջև: Հիմնարկի գրադարանը համալրվել է նոր գրականությամբ, ակտիվորեն գործում են մշակութային և մարզական խմբակները, հանգստի բոլոր սենյակներում ստեղծագործող դատապարտյալների սենյակներում, երկարատև տեսակցության սենյակներում առկա են հեռուստացույցներ: Կան շախմատի, թենիսի սենյակներ, մարզագույք, ֆուտբոլի դաշտ, վոլեյբոլի դաշտ: Կրթության իրավունքի ապահովման առումով ևս սահմանափակում չկա: Կրթություն ստանալու կամ շարունակելու ցանկություն հայտնած բոլոր դատապարտյալները հնրավորություն են ստանում իրականացնել իրենց իրավունքը:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ ԽԿԿ-ի կողմից բարձրացված բոլոր խնդիրներին պատասխան է տրվել, ինչ վերաբերում է հոմոսեքսուալ դատապարտյալների նկատմամբ խտրական վերաբերմունքի խնդրին, ապա ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը չի ընդունում, որ նրանք խտրական վերաբերմունքի են արժանանում քրեակատարողական հիմնարկում:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

12. Կոմիտեն առաջարկում է լուծել «Վարդաշեն» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկները բուժաշխատողներով ապահովելու խնդիրը¹¹³:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմի, ստորաբաժանման միջոցների և հնարավորությունների հետ կապված պետք է նշել, որ ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ-ի 2 թափուր հաստիքներից համալրվել է 1-ը: «Կոշ» և «Վարդաշեն ՔԿՀ-ների 3-րդ կարգի մասնագետների թափուր հաստիքների համալրման ուղղությամբ տարվում են աշխատանքներ: Բժշկական աշխատողների գիշերային և շաբաթ-կիրակի օրերին հերթապահությունների հարցը կատարվում է առկա անձնակազմի ուժերով: «Կոշ» ՔԿՀ-ի ատամնաբույժի համալրման հարցը ընթացքում է, իսկ այդ ծառայությունը

¹¹³ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 102-րդ կետ, CPT /Inf (2011)25

Ժամանակավորապես մատուցվում է նեղ մասնագիտացված բուժակի կողմից¹¹⁴:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Արդյո՞ք լուծվել է «Վարդաշեն» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկները բուժաշխատողներով ապահովելու խնդիրը, եթե այո՝ խնդրում եմ, տրամադրել տեղեկատվություն նշված հիմնարկների բուժաշխատողների քանակի վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի հաստիքացուցակով նախատեսված 6 հաստիքները (պետ, գլխավոր մասնագետ, 4՝3-րդ կարգի մասնագետներ-բուժակ) համալրված են: Պայմանագրային կարգով աշխատում են նաև 4 բժիշկ մասնագետներ (մաշկավեներոլոգ, ակնաբույժ, ատամնաբույժ և նյարդաբան): «Կոշ» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի հաստիքացուցակով նախատեսված 7 հաստիքներից թափուր են 2-ը՝ 1 բժշկի և 1 բուժակի հաստիքները: Համալրման հարցը ընթացքի մեջ է:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ դեռևս չի լուծվել «Կոշ» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի հաստիքացուցակով նախատեսված յոթ հաստիքներից երկու թափուր՝ բժշկի և բուժակի հաստիքների համալրման հարցը:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

13. Կոմիտեն առաջարկում է քրեակատարողական հիմնարկներին ապահովել դեղորայքով և համապատասխան բժշկական միջոցներով¹¹⁵:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Չնայած այն հանգամանքին, որ դեղորայքի ձեռք բերման հետ կապված առկա են որոշակի ֆինանսական դժվարություններ, այնուամենայնիվ աճող ֆինանսավորման հետ մեկտեղ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը ձեռք է բերում նորանոր դեղորայք և բժշկական պարագաներ¹¹⁶:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Արդյո՞ք քրեակատարողական հիմնարկներն ապահովվել են դեղորայքով և համապատասխան բժշկական միջոցներով: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն և այլ քրեակատարողական

¹¹⁴ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 102-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

¹¹⁵ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 105-րդ կետ, CPT /Inf (2011)25

¹¹⁶ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 105-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

հիմնարկներն ապահոված են անհրաժեշտ դեղորայքով և բժշկական պարագաներով: Քրեակատարողական հիմնարկները նեկայացնում են հայտեր, որոնց հիման վրա կազմված ընդհանուր հայտով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ձեռք են բերվում անհրաժեշտ դեղորայք և բժշկական պարագաներ:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն և այլ քրեակատարողական հիմնարկներն ապահոված են անհրաժեշտ դեղորայքով և բժշկական պարագաներով: Քրեակատարողական հիմնարկները նեկայացնում են հայտեր, որոնց հիման վրա կազմված ընդհանուր հայտով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ձեռք են բերվում անհրաժեշտ դեղորայք և բժշկական պարագաներ:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

14. Կոմիտեն արձանագրել է գիշերվա ժամերին և շաբաթ-կիրակի օրերին ոչ կանոնակարգված գրաֆիկով աշխատելու և բժշկի բացակայության խնդիրը¹¹⁷:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Բժշկական աշխատողների գիշերային և շաբաթ-կիրակի օրերին հերթապահությունների հարցը կատարվում է առկա անձնակազմի ուժերով¹¹⁸:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Արդյո՞ք վերացվել է գիշերային ժամերին քրեակատարողական հիմնարկներում բժշկի բացակայության խնդիրը:

Պատասխանի համառոտ տեքստը.

Բացառությամբ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի՝ մյուս ՔԿՀ-ներում նախատեսված չէ գիշերային ժամերին հերթապահող բժիշկ: Գիշերային հերթապահությունները ապահովվում են 3-րդ կարգի մասնագետների (բուժակների) միջոցով:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ ԽԿԿ-ի զեկույցին ի պատասխան ՀՀ կառավարությունը տվել է ընդհանրական պատասխան, որից չի երևում թե գիշերային ժամերին ՔԿՀ-ներում բժիշկ լինում է թե ոչ, սակայն ի պատասխան ՌԴԿ հարցմանը ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը նշել է, որ բացի «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի՝ մյուս քրեակատարողական հիմնարկներում նախատեսված չէ գիշերային ժամերին հերթապահող բժիշկ: Գիշերային հերթապահությունները ապահովվում են 3-րդ կարգի մասնագետների (բուժակների) միջոցով: Տվյալ պարագայում, ԽԿԿ մտահոգությունն է հայտնել, որ գիշերվա ժամերին և շաբաթ-կիրակի օրերին բժիշկներ չկան քրեակատարողական հիմնարկներում:

¹¹⁷ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 100-րդ կետ, CPT /Inf (2011)25

¹¹⁸ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 100-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

Կոմիտեի առաջարկության տեքստը.

15. Կոմիտեն առաջարկում է քրեակատարողական հիմնարկների բուժանձնակազմին տալ համապատասխան հրահանգներ կապված հետևյալ խնդիրների հետ.

- ✚ բժշկական գննությունը չպետք է լինի մակերեսային
- ✚ բժշկական գննությունը չպետք է կատարվի ուղեկցող ոստիկանական անձնակազմի ներկայությամբ¹¹⁹:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկներ մուտք գործած անձանց մակերեսային բժշկական գննություն կատարելուն («Կոշ»), հիմնարկի անձնակազմի կամ ուղեկցող ոստիկանական անձնակազմի ներկայությամբ («Նուբարաշեն», «Վարդաշեն»), բժշկական գննություն կատարելուն պետք է նշել, որ ՀՀ ԱՆ ՔԿՎ պետի կողմից 2010 թվականին բոլոր քրեակատարողական հիմնարկներին հանձնարարվել է պատշաճ ձևով կատարել կալանավորված անձանց և դատապարտյալների առաջնային բժշկական գննումը և արդյունքները գրանցել բժշկական մատյանում:

ՀՀ ԱՆ ՔԿՎ բժշկական սպասարկման բաժնի կողմից քրեակատարողական հիմնարկների բժշկական ստորաբաժանումներին հանձնարարվել է խստորեն պահպանել ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշման 37-րդ կետի պահանջները, այն է՝ բոլոր բժշկական գննությունները պետք է անցկացվեն քրեակատարողական կամ այլ ծառայությունների լսողության սահմաններից դուրս, կալանավորվածներին պահելու վայր ընդունելիս (այդ թվում՝ տարանցմամբ), անձինք անցնում են նախնական բժշկական գննություն, որի արդյունքներն արձանագրվում են համապատասխան մատյանում՝ բժշկական օգնություն ցույց տալու և մարմնական վնասվածք կամ առողջական վիճակի վերաբերյալ այլ գանգատ արձանագրելու նպատակով: Կալանավորված անձի կամ դատապարտյալի բժշկական գննության արձանագրումը պետք է ներառի՝

1. բժշկական գննության ենթակա անձի կողմից արված բոլոր հայտարարությունների ամբողջական պատկերը (ներառյալ իր առողջական վիճակի նկարագրությունը և վատ վերաբերմունքի մասին ցանկացած հայտարարություն),
2. օբյեկտիվ բժշկական գննության արդյունքների ամբողջական պատկերը,
3. բժշկի եզրակացությունը՝ հիմնված սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի վրա:

Եթե բժշկական գննության արդյունքում հայտնաբերված մարմնական վնասվածքը կամ առողջության վիճակի վերաբերյալ գանգատը կալանավորված անձի կամ դատապարտյալի հայտարարության հետևանք է, նրա նկատմամբ հանցագործության հատկանիշներ պարունակող որևէ արարք, ապա բժշկական գննություն իրականացնող անձը դրա մասին տեղյակ է պահում կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմին:

¹¹⁹ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 107-րդ կետ, CPT /Inf (2011)25

Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը դրա մասին տեղյակ է պահում իրավասու մարմիններին:

Ցանկացած բժշկական զննության արդյունքները, ինչպես նաև կալանավորված անձի հայտարարությունները և բժշկի եզրակացությունները պետք է մատչելի լինեն կալանավորված անձի կամ դատապարտյալի և վերջինիս կողմից լիազորված անձի համար¹²⁰:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Նախատեսվում էր վերացնել քրեակատարողական հիմնարկներում մակերեսային բժշկական զննության և ուղեկցող ոստիկանական անձնակազմի ներկայությամբ զննություն կատարելու հետ կապված թերությունները: Արդյո՞ք վերացվել են նշված բոլոր թերությունները: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Քրեակատարողական հիմնարկներում մակերեսային բժշկական զննության պրակտիկա գոյություն չունի: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետի կողմից քրեակատարողական հիմնարկների բժշկական ստորաբաժանումներին հանձնարարվել է խստորեն պահպանել ՀՀ կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն 37 կետի պահանջները:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ այն չի պատասխանում ուղեկցող ոստիկանական անձնակազմի ներկայությամբ զննություն կատարելու հետ կապված թերություններին, այսինքն պատասխան չի տրվել այն հարցին թե արդյո՞ք բժշկական զննությունը շարունակվում է իրականացվել ուղեկցող ոստիկանական անձնակազմի ներկայությամբ թե ոչ: Նշված պատասխանից կարելի է եզրահանգել, որ բժշկական զննությունը շարունակվում է կատարվել ուղեկցող ոստիկանական անձնակազմի ներկայությամբ:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

16. Կոմիտեն առաջարկում է համապատասխան միջոցներ ձեռնարկել տուբերկույրոգի դեմ արդյունավետ պայքարի առնչությամբ¹²¹:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Վերջին չորս տարիների կտրվածքով քրեակատարողական հիմնարկներում տուբերկույրոգի հիվանդության աճի և մահացության դեպքերի վերաբերյալ վիճակագրության տվյալներ¹²²:

¹²⁰ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 107-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

¹²¹ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 108-րդ կետ, CPT /Inf (2011)25

N	Տարի	Ռեզուլյար ՏԲ			Բազմադեղորայքային		
		Քանակ	Այդ թվում նոր դեպքեր	Մահ	Քանակ	Այդ թվում նոր դեպքեր	Մահ
1	2007	29	16	0	17	0	0
2	2008	61	33	1	20	3	1
3	2009	70	43	0	27	12	0
4	2010	45	28	0	25	7	0

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Արդյո՞ք համապատասխան միջոցներ են ձեռնարկվում տուբերկուլյոզի դեմ արդյունավետ պայքարի առնչությամբ: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի շրջանակներում իրականացվում են ԴՕՏՍ ծրագրով նախատեսված բոլոր բաղադրիչների ապահովումը (հիվանդների ակտիվ և պասիվ հայտնաբերում, այդ թվում շարժական ֆլուորոգրաֆի միջոցով, խորիխի եռակի հետազոտում և այլն): «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության հետ համատեղ «Դատապարտյալների հիվանդանոց» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում իրականացվում են նաև դեղորայքակայուն տուբերկուլյոզով հիվանդների բուժում:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի շրջանակներում իրականացվում են մի շարք միջոցառումներ, որոնք միտված են ազատազրկված անձանց շրջանում տուբերկուլյոզի դեմ պայքարին:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

17. Կոմիտեն առաջարկում է ՀՀ իշխանություններին դադարեցնել ինքնասպանության հակված դատապարտյալներին մեկուսացնելու փորձը և ինքնասպանության կանխագելմանն ուղղված հատուկ միջոցներ ձեռք առնել¹²³:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Նշված պարագրաֆում ներկայացված դիտողությունը ընդհանուր առմամբ ընդունելի է, սակայն պետք է նշել, որ ինքնասպանությանը հակված ազատազրկվածների հետ մշտապես իրականացվում են հոգեբանական աշխատանքներ համապատասխան

¹²² ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 108-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

¹²³ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 117-րդ կետ, CPT /Inf (2011)25

մասնագետների միջոցով: Այնուամենայնիվ, ոլորտը կանոնակարգելու անհրաժեշտությունն առկա է և թերևս անհրաժեշտ է ունենալ հստակ կանոնակարգ- ուղեցույց, որը կօգնի համապատասխան մասնագետներին ադեկվատ կերպով արձագանքելու ինքնասպանության հակում ունեցող ազատազրկվածներին, ինչպես նաև կկարգավորի այդ խնդիրները¹²⁴:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվում քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանության դեպքերի կանխարգելման առնչությամբ: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Քրեակատարողական հիմնարկներում հոգեբանները մշտապես իրականացնում են ախտորոշիչ, կանխարգելիչ աշխատանքներ: Ախտորոշման հիման վրա ինքնավնասման հակում ունեցող անձանց հետ պարբերաբար իրականացվում են թերապևտիկ աշխատանքներ՝ ինքնավնասման և ինքնասպանության փորձերը կանխելու ուղղությամբ:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ քրեակատարողական հիմնարկներում հոգեբանները մշտապես իրականացնում են ախտորոշիչ, կանխարգելիչ աշխատանքներ, սակայն ՌԴԿ տեղեկատվության համաձայն քրեակատարողական հիմնարկներում հոգեբանի հաստիքով աշխատող մասնագետներից ոչ բոլորն են, որ ունեն համապատասխանում հոգեբանի կրթության և որակավորում, որի պարագայում հնարավոր չէ մասնագիտական ախտորոշիչ, կանխարգելիչ աշխատանքներ իրականացնել:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

18. Կոմիտեն առաջարկում է ՀՀ իշխանություններին վերանայել հացադուլավորների նկատմամբ խտրական քաղաքականության իրականացումը և բացառել նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքի ցուցաբերումը¹²⁵:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Հացադուլավոր ազատազրկվածները մշտապես գտնվում են բժիշկների հսկողության ներքո: Ըստ օրենքի նրանք պահվում են մյուս ազատազրկվածներից առանձին: Ինչ վերաբերվում է նրանց կարգապահական բաժնի ներսում պահելուն, ապա պետք է նշենք, որ օրենսդրությամբ կարգապահական խցերը (պատժախցերը) սովորական խցերից տարբերվում են միայն նրանով, որ ցերեկային ժամերին կարգապահական խցերից հավաքվում են անկողնային պարագաները: Բնականաբար հացադուլավորների

¹²⁴ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 117-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

¹²⁵ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 118-րդ կետ, CPT /Inf (2011)25

դեպքում նման բան չի արվում: Այդուամենայնիվ, նշված ոլորտը ևս ունի կանոնակարգման կարիք¹²⁶:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Նախատեսվում էր վերանայել հացադուլավորների նկատմամբ խտրական քաղաքականության իրականացումը և բացառել նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքի ցուցաբերումը: Արդյո՞ք իրականացվում են նշված բոլոր միջոցառումները: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Հացադուլի մեջ գտնվող կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ խտրական վերաբերմունք առկա չէ:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ քրեակատարողական հիմնարկներում հացադուլի մեջ գտնվող կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ խտրական վերաբերմունք առկա չէ:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

19. Կոմիտեն առաջարկում է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի հոգեբուժական բաժանմունքում լուծել հոգեկան խանգարումներով հիվանդներին սոմատիկ հիվանդների հետ պահելու, հոգեբուժական սենյակների չվերանորոգված վիճակի, անձնական հիգիենայի կանոնների չպահպանման և համապատասխան որակավորում ունեցող մասնագետների բացակայության հետ կապված խնդիրները¹²⁷:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Ինչ վերաբերում է այն դիտարկմանը, որ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բաժանմունքում հոգեկան խանգարումներով հիվանդները պահվում են սոմատիկ հիվանդների հետ, հոգեբուժական բաժանմունքի սենյակները վերանորոգման կարիք ունեն, չեն պահպանվում անձնական հիգիենայի կանոնները, հիվանդների զբաղմունքի հնարավորությունները տարրական են, չկան համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ, ապա պետք է նշել, որ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բաժանմունքում ներկայումս բուժում են ստանում միայն հոգեկան խանգարում ունեցող հիվանդներ, իսկ սոմատիկ հիվանդները տեղափոխվել են համապատասխան բաժանմունքներ: Պահպանվում են յուրաքանչյուր հիվանդի համար սահմանված անհրաժեշտ տարածքային նորմատիվները: Վերանորոգվել են սենյակները, նորացվել և փոխվել է

¹²⁶ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 118-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

¹²⁷ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 113-րդ կետ, CPT /Inf (2011)25

սանհանգույցը, հիվանդներին տրամադրվում են հիգիենայի պարագաներ: Բաժանմունքի սանիտարին հանձնարարվել է կատարել հիվանդների ամենօրյա համայն՝ պարբերաբար անցկացնել սանիտարական գրագիտության աշխատանքներ անձնական հիգիենայի կանոնների պահպանման վերաբերյալ: Հիվանդներին տրված է ոչ մոլուցքային խաղերի և հեռուստացույց դիտելու հնարավորություն, նրանք օգտվում են գեղարվեստական գրականությունից: ՀՀ առողջապահության նախարարության հետ սերտ համագործակցության շրջանակներում կազմակերպվում են հանրապետության առաջատար հոգեբույժների կողմից խորհրդատվություններ¹²⁸:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Նախատեսվում էր լուծել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի հոգեբուժական բաժանմունքում հոգեկան խանգարումներով հիվանդներին սոմատիկ հիվանդների հետ պահելու, հոգեբուժական սենյակների չվերանորոգված վիճակի, անձնական հիգիենայի կանոնների չպահպանման և համապատասխան որակավորում ունեցող մասնագետների բացակայության հետ կապված խնդիրները: Արդյո՞ք լուծվել են վերը նշված բոլոր խնդիրները: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բանաժանմունքում պահվող հոգեկան խնդիրներ ունեցող հիվանդները պահվում են առանձին հիվանդասենյակներում: Շենքային բավարար պայմանների առկայության դեպքում կառանձնացվի նաև մասնաշենքը: Պահպանվում են անձնական հիգիենայի կանոնները: Ըստ անհրաժեշտության կատարվում են վերանորոգման աշխատանքները:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պատասխանից երևում է, որ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի հոգեբուժական բանաժանմունքում պահվող հոգեկան խնդիրներ ունեցող հիվանդները պահվում են առանձին հիվանդասենյակներում: Շենքային բավարար պայմանների առկայության դեպքում կառանձնացվի նաև մասնաշենքը:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

20. Կոմիտեն առաջարկում է համապատասխան քայլեր ձեռնարկել օտարերկրյա դատապարտյալների այլցելությունների իրավունքը հեռախոսային խոսակցություններով փոխարինելու ուղղությամբ¹²⁹:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Համաձայն օրենքի յուրաքանչյուր դատապարտյալի մեկ հեռախոսային խոսակցության տևողությունը չի կարող գերազանցել 15 րոպեն, բացի այդ, հաշվի առնելով

¹²⁸ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 113-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

¹²⁹ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 79-րդ կետ, CPT /Inf (2011)25

ազատագրվածի կողմից ներկայացված հիմնավոր պատճառաբանությունը, այդ ժամկետը կարող է երկարացվել ևս 10 րոպեով: Ինչ վերաբերվում է Կոմիտեի այն առաջարկին, որ օտարերկրյա դատապարտյալների դեպքում տեսակցությունների իրավունքը փոխարինվի հեռախոսային խոսակցություններով, ապա այն ընդունելի է և կքննարկվի օրենքում համապատասխան փոփոխությունների կատարելու հարցը¹³⁰:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Նախատեսվում էր օտարերկրյա դատապարտյալների տեսակցությունների իրավունքը փոխարինել հեռախոսային խոսակցություններով: Արդյո՞ք իրականացվել է նշված փոփոխությունը: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Պատասխանի համառոտ տեքստը.

Օտարերկրյա դատապարտյալներին հեռախոսային խոսակցությունների թույլտվության սահմանափակում պրակտիկայում չկա, դրանից ելնելով՝ տեսակցությունները հեռախոսային խոսակցության փոխարինելու անհրաժեշտություն ևս չկա:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը պատասխանով հերքում է օտարերկրյա դատապարտյալներին հեռախոսային խոսակցությունների թույլտվության սահմանափակման պրակտիկայի առկայությունը և դրանից ելնելով՝ գտնում է, որ տեսակցությունները հեռախոսային խոսակցության փոխարինելու անհրաժեշտություն չկա:

Կոմիտեի առաջարկության տեքստը.

21. Կոմիտեն դիմում է իշխանություններին, որպեսզի բժշկական օգնության կարիք ունեցող դատապարտյալները ժամանակին տեղափոխվեն համապատասխան բժշկական հաստատություն¹³¹:

Կոմիտեի առաջարկության վերաբերյալ ՀՀ կառավարության պատասխան հաշվետվության տեքստը.

Ինչ վերաբերվում է հետաձգումներին, ապա նման երևույթներ չեն արձանագրվել, անհապաղ ստացիոնար բուժման կարիք ունեցողների տեղափոխությունները կատարվում են շտապ կարգով¹³²:

ՌԴԿ հարցման համառոտ տեքստը.

Արդյո՞ք բացառվում են դատապարտյալներին հիվանդանոց տեղափոխելու հետաձգումները: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

¹³⁰ ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 79-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

¹³¹ ԽԿԿ 2010 թվականի այցելության զեկույցի 104-րդ կետ, CPT /Inf (2011)25

¹³² ՀՀ կառավարության պատասխանը ԽԿԿ-ի 2010 թվականի այցելության զեկույցի 104-րդ կետի վերաբերյալ, CPT /Inf (2011)25

Պատասխանի համառոտ տեքստը.

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ և առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ տեղափոխվում են բացառապես ստացիոնար բուժման կամ հետազոտման կարիք ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները: Ինչ վերաբերում է հետաձգումներին, ապա նման դեպքեր չեն արձանագրվել:

Եզրահանգում/Նշում.

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը նշում է, որ բժշկական օգնության կարիք ունեցող կալանավորները և դատապարտյալները ժամանակին են տեղափոխվում համապատասխան բժշկական հաստատություններ, մինչդեռ 2010 թվականի հոկտեմբերի 24-ին «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում մահացել է կալանավորված՝ Սլավիկ Ոսկանյանը, որի մահը ըստ նրա հարազատների հնարավոր է եղել կանխել, եթե նա ժամանակին տեղափոխվեր «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ:

7. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Ամփոփելով վերը ներկայացված տեղեկությունները «Ռազմավարական դատավարությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հանգել է հետևյալ եզրահանգմանը, որ.

✚ ՀՀ Ոստիկանությունը որպես կանոն ձեռք է առնում որոշակի քայլեր ԽԿԿ կողմից արված առաջարկությունների իրականացման ուղղությամբ, սակայն որպես կանոն դրանք կրում են ձևական բնույթ կամ անբավարար են առկա իրավիճակի փոփոխության համար: Դեռ ավելին, որոշ դեպքերում Հայաստանի Հանրապետությունը իրականացնելով ԽԿԿ առաջարկությունների կատարմանը միտված գործողություններ, սովորույթի ուժով «գաղտնագրելով» վերջիններիս, դրանցով համալրում է Հայաստանում առկա վիճելի օրենսդրական ակտերի առանց այն էլ երկարաշունչ ցանկը:

✚ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը խիստ թերացել է ԽԿԿ առաջարկությունների կատարման ուղղությամբ անգամ ֆորմալ այնպիսի գործողությունների իրականացումը, ինչպիսիք են ներքին կարգերի մշակումը և ներդրումը չի կատարվել:

✚ ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունն իրականացրել է միայն այնպիսի գործողություններ, որոնք վերաբերում են ԱԱԾ աշխատակիցների վերապատրաստմանը, սակայն համակարգային խնդիրների իրականացման բնագավառում, մասնավորապես ձերբակալված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի ցուցաբերման դեպքերի բացահայտման և խիստ պատժելուն ուղղված ԽԿԿ մտահոգությունն անտեսվել է:

✚ ՀՀ առողջապահության նախարարությունը հախաճ հստակ պատասխաններ չի տրամադրել կամ ընդհանրապես չի էլ անդրադարձել ԽԿԿ առաջարկություններին, իսկ որոշ դեպքերում նախարարության կողմից տրամադրված պատասխանները բարեփոխումների իրականացման կապակցությամբ չեն համապատասխանում իրականությանը:

✚ ՀՀ պաշտպանության նախարարությունը ԽԿԿ կողմից արված առաջարկությունների ուղղությամբ կատարել է կոնկրետ քայլեր, որոնք մասնավորապես միտված են ռազմական ոստիկանության համակարգի կարգապահական մեկուսարաններում պահվող անձանց պահման պայմանների վիճակի բարելավմանը, ինչպես նաև զինծառայողների կարգապահական մեկուսացումը որպես տույժ հանվելուն ուղղված օրենսդրական բարեփոխումներին:

✚ ՀՀ արդարադատության նախարարությունը որոշ դեպքերում եղել է բավական հետևողական ԽԿԿ առաջարկությունների իրականացման գործընթացում՝ նախաձեռնելով գործուն մեխանիզմներ: Միննույն ժամանակ, նախարարությունը բավականին հաճախ գերդաստում է անպատասխան թողնել Կոմիտեի այն առաջարկությունները, որոնք վերաբերում են ձերբակալվածների և կալանավորվածների բժշկական զննությանը, բուժ օգնությանը և այլն:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով կազմակերպության կողմից իրականացված հետազոտության արդյունքները, «Ռազմավարական դատավարության կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը ներկայացնում է իր հետևյալ առաջարկությունները, ուղղված.

ՀՀ Ոստիկանությանը

- ✚ Մշակել և ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներից յուրաքանչյուրում հասանելի դարձնել բերման ենթարկված անձանց իրավունքների և պարտականությունների մասին ռուսերեն կամ անգերեն լեզվով հուշաթերթիկներ:
- ✚ Ներդնել էլեկտրոնային արձանագրություն կազմելու համակարգ:
- ✚ Մշակել ՀՀ ոստիկանության հակակոռուպցիոն վարքագծի ուղեցույց և իրականացնել կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ ծառայողական արդյունավետ քննություններ:
- ✚ Ձերբակալվածների նկատմամբ ուժ գործադրելու և վատ վերաբերմունքի դեպքերի հետ կապված խախտումները քննվեն քրեական հետապնդման շրջանակներում և հանգեն մեղավոր անձանց քրեական պատասխանատվությանը:
- ✚ Ապահովել ընդունված ընթացակարգերի, ուղեցույցների և ենթաօրենսդրական ակտերի արդյունավետ կիրարկում:
- ✚ ՀՀ Ոստիկանության բոլոր քննչական բաժին/բաժանմունքներում տեղադրել տեսաձայնագրման /հայելային/ սենյակներ:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

- ✚ Մշակվել մտավոր առողջության ազգային համապարփակ ծրագիր:
- ✚ Մշակել խոստացված զսպման միջոցների իրականացման հստակ քաղաքականություն:

ՀՀ Ազգային անվտանգության ծառայությանը.

- ✚ Ձեռք առնել միջոցներ ձերբակալված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի ցուցաբերման դեպքերի բացահայտման և մեղավորներին խիստ պատժելու նպատակով:

ՀՀ առողջապահության նախարարությանը.

- ✚ Ավելացնել Նուբարաշենի հանրապետական հոգեբուժարանում անձնակազմի թիվը, իրականացնել 7-րդ հիվանդասենյակի հոգեբույժների և քույրերի քանակի ավելացում, կազմակերպել անձնակազմի համար նախատեսված վերապատրաստումներ, այդ թվում հիվանդների իրավունքների վերաբերյալ դասընթացներ:

- ✚ Նուբարաշենի հոգեբուժական հիվանդանոցում իրականացնել թերապևտիկ և վերականգնողական սոցիալ-հոգեբանական միջոցառումներ:
- ✚ Նորքի հոգեբուժական կենտրոնում անհրաժեշտ է բարելավել թերապևտիկ միջոցառումների կիրառումը և ավելի շատ հիվանդներ ընդգրկել: Պատանի հիվանդների համար պետք է նախատեսել հատուկ ծրագիր, այդ թվում նաև կրթական: Քայլեր պիտի ձեռնարկվեն յուրաքանչյուր հիվանդի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելու նկատմամբ:
- ✚ Ավելացնել Նորքի հոգեբուժական կլինիկայի անձնակազմ/հիվանդ հարաբերակցությունը:
- ✚ Գործնականում ապահովել ոչ կամովին հոսպիտալացման վերաբերյալ որոշումների և օրենքի դրույթների իրականացումը:
- ✚ Հոգեբուժական հիմնարկներում բուժվող հիվանդներին պարբերաբար տեղեկացնել իրենց վերաբերյալ հոգեբուժական հանձնաժողովի և դատարանի որոշումների մասին, ինչպես նաև տրամադրել այդ որոշումների պատճենները:
- ✚ Մեխանիկական զսպան միջոցները կիրառել միայն խիստ անհրաժեշտության դեպքում և համապատասխան միջամտության սենյակներում:
- ✚ Բարելավել հոգեբուժական հիմնարկներում պահման պայմանները:

ՀՀ արդարադատության նախարարությանը.

- ✚ Լուծել ՔԿՀ-ներում գերբնակեցվածության խնդիրը:
- ✚ Լուծել դատապարտյալների օգտակար զբաղվածության խնդիրը:
- ✚ Ձեռք առնել միջոցառումներ դատապարտյալների միջև աստիճանակարգված հարաբերությունների բացառման համար:
- ✚ Բացառել ցմահ ազատազրկման դատապարտյալների տեղաշարժի կատարվումը հատուկ միջոցների կիրառմամբ:
- ✚ Լուծել օտարերկրյա դատապարտյալների խցերի գերծանրաբեռնվածության խնդիրը:
- ✚ Լուծվել «Կոշ» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի հաստիքացուցակով նախատեսված յոթ հաստիքներից երկու թափուր՝ բժշկի և բուժակի հաստիքների համալրման հարցը:
- ✚ Հատուկ ուշադրության արժանացնել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի և այլ քրեակատարողական հիմնարկների անհրաժեշտ դեղորայքով և բժշկական պարագաներով ապահովված լինելուն:
- ✚ Ապահովել գիշերային ժամերին և շաբաթ-կիրակի օրերին բժիշկի առկայությունը քրեակատարողական հիմնարկներում:
- ✚ Ապահովել, որպեսզի քրեակատարողական հիմնարկներում հոգեբանի հաստիքով աշխատող բոլոր աշխատակիցները ունենան համապատասխանում հոգեբանի կրթության և որակավորում:

✚ Բժշկական օգնության կարիք ունեցող կալանավորներին և դատապարտյալներին ժամանակին տեղափոխել համապատասխան բժշկական հաստատություններ: